ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԺԷ· ՏԱՐԻ 1887 ՕԳՈՍՏՈՍ

ՍՈՒՆԱԿԻ ՏՂԱՆ

ՎԷՊ ՌՈՒՄԱՀԱՑ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ*

Ժ.

ԳՆԱՆՔ...

— Ո՞ւր տանար ինձ ոգին։

— Իգդիր...։

— Տո՛ւր ինձ նամակը։

Այս պատահում էր հոկտեմբեր ամսի 30ին սպէրի այն կղզեակի մէջ որոյ չրջապատող եղեգանց հրդեհն էր եղել ե- ղոտասի 11ի օրը։

Խօսողներն ոչ այլ ոք էին, եթէ ոչ Սուրակի Տղան, Ջհան-

*Տե՛ս յուլիսի ամսագիրն։

գիր և Առաքել, նախկին երեք փախստականներն, որոց միջից միայն պակասում էր Գրիգոր։

Մի ամսից աւելի էր անցել այն օրից, երբ Սոխակի Տղան բաժանուել էր Ֆնդօից և Գրիգորից, ոչ ոք գիտէ թէ այդ դիշեր նա ուր էր գնացել և միւս օրը գալով սաղերի մէջ գտել էր իրեն սպասող Առաքելին և Ջհանգիրին։

Սոխակի Տղան մինչև իսկ չէր հարցրել թէ յաջողուեցաւ Գրիգորի, Սաֆինիկի և այլոց փախուստն, այլ լռութեամբ բարևել էր իւր ընկերներին և Ջհանգիրին ուղարկել էր Իգդիր՝ իրենց կերակուր բերելու։

Նախկին Սոխակի Տղան չէր, այլ արկածախնդիր, սոսկալի կռուասէր և խրոխտ կարապետը։ Նա այդ մի դիշերուայ մէջ փոխուել էր այնպէս, որպէս որ մի չար մարդ տարիների ընթացքում բարիի է փոխվում։

Սակայն նորա տխուր դէմքն աւելի տխրել և դունաթափ էր, հայուածքն անտարբեր և խոհուն, այնպէս լուրջ որ մարդ նորան յուսահատութեան արձանը կը կարծէր։

Իւր նախկին ընկերները բոլորովին զարմացած միմեանց երեսին էին նայել, բայց ըստ իւրեանց սովորութեան ոչինչ չէին հարցրել։

Այդ մի ամսուայ ընթացքում Սոխակի Տղան երբէք չբաժանուեցաւ իւր ընկերներից, մինչև իսկ առաջուայ նման մայոյ 15ի օրը չգնաց Քանաքեռ, ուր նա համբուրելու էր իջնում Վարդուհուոյ գերեզմանը։ Ընդ հակառակն նա այդ օրը, քարայրի մէջ պառկեց խոտերի վրայ և ճաշի ժամանակ հազիւ մի քանի պրտուջ ուտելուց յետոյ, նորէն պառկեց և մինչև միւս օրն առաւօտեան այդպէս անշարժ մնաց։

Միւս օրը նորա ընկերները կարողացան նկատել որ Սոխակի Տղայի աչքերը կարմրել էին և դէմքն աւելի դունաթափուել։

Չգիտէին թէ ինչ մի բան էր պատահել որ իրենց ղեւարթ և քաջ ընկերը բոլորովին ջլատուել էր։ Հարցնել չէին համարձակվում։

Վերջապէս եկաւ հոկտեմբերի 20ը։ այն օրերն, երբ ամեն ամսուայ մէջ այդ օրը Սոխակի Տղան նախ իւր մօրը տեսնելու էր գնում և ապա հինգ օր չարունակ գիւղէ գիւղ պտտելով տեղեկանում էր գիւղացւոյ ցաւերին և ապագայ կողոպուտների և դատավճիռների մի ցանկ կազմած՝ նա գալիս էր իւր

ընկերներին հաղորդելու և միւս օրը նոքա սկսում էին իրենց դատաստանը ։

Բայց եկաւ հոկտեմբերի 20ը, նոյնպէս և 29ը · իսկ Սոխակի Տղան ոչ գնաց և ոչ էլ մի որ և իցէ խօսք ասաց իւր ընկերներին ։

Առաքել այլ ևս չդիմանալով՝ հարցրեց Սոխակի Տղային ։

— Կարապետ ապէր, ասաց նա վախվխելու ձայնով, բաս ինչո՞ւ չգնացիր Քանաքեռ մօրդ տեսնելու · · · ։

— Եկող ամիս կ'երթամ, պատասխանեց Կարապետ անհոգութեամբ ։

— Բաս գիւղե՞րը երբ կ'երթաս · · · ։

— Աւելորդ է · · · այժմ գիւղերը մաքրուած են աւազակներից ։

— Հայ հա՛յ · · · ժպտեց Առաքել, թէ ես Ոսին ճանաչում եմ, նա օր ըստ օրէ նահանգը լեցնում է զանազան տեսակ փայլուն աւազակներով. անցեալ օր էլ լսեցի որ մի խումբ Ռուս Դոնաքօրները ու Մալականների գաղթականութիւն է ուղարկել Անիի չրջակայքում, որպէս զի նոքա իրենց անբարոյականութեամբ աւերեն մեր սուրբ Հայերի կեանքն, որպէս զի մեր կանայք հետևին նոցա կանանց և մի մի բոզեր լինին, իրենց եղբօրների, հօրեղբօրների և դրացիների ծոցը մտնեն, ու մարդիկն էլ տեսնեն, չխօսին · · · համբերելո՞ւ բան է · · · ։

— Ադա՛ Առաքել, մէջ մտաւ Ջհանգիր, համա դու էլ ստեր ես բրթում հա՛մ, բաս ըտէնց բա՞ն կը լինի, սկի քոյրն եղբօրը ծո՞ցը կը մտնի · · · ։

— Դու ինչ գիտես, միջահատեց բարկութեամբ Առաքել, ես գիտեմ էդ սադանի զաւակ ազգի բանը · · · ։ Հը՛, Կարապետ ապէր, դարձաւ նա խոտերի վրայ թիկն տուած Սոխակի Տղային, սո՛ւտ եմ ասում, ըտենց չի՞ · · ·

— Ասացիր, պատասխանեց Կարապետ, բայց բոլորն ո՛չ · · · ։

— Դէ մնացածն էլ դո՛ւ ասա, գոչեց Առաքել զուարթութեամբ՝ նկատելով որ Սոխակի Տղան սկսում է վերստանալ իւր նախկին ազնիւ բարկութիւնը ։

— Ասե՞մ · · · սկսեց Սոխակի Տղան ուսերը թափահարելով, բայց չէ՞ք սարսափիլ · · · ։

— Ի՞նչ կայ սարսափելու, գոչեց Ջհանգիր, հեքեաթը մի՞թէ վա՞խ է պատճառում ։

— Հեքեաթի՞ · · · գոչեց բարկութեամբ Սոխակի Տղան և նստեց · նորա աչքերը փայլեցին ։

— Հեքեաթ . . . կրկնեց նա կատաղութեամբ , հեքեաթ ես համարում որ կառավարութիւնը Հայերին Ռուսաստանի խոր բերն է տանում և Հայաստանն օտարներով , Ռուներով ու լեռնցի արջ վայրենիներով է լեցնում . հեքեաթ ես համարում որ դադրեցնել չուզող և կառավարութեան խոստումներից չհրապուրուող Հայաստանի միջի Հայ գիւղացուց կեանքն ապահովելու համար նա անհամար պռոնիկներ է ուղարկում գիւղերի մէջ , հեքեաթ ես համարում որ այդ պռոնիկներն իրենց չպատճառած դէմքերով , հրապուրիչ ձևերով և իսկոյն անձնատուր լինելովը գրաւումեն դէպ ի իրենց խե՛ղճ միամիտ գիւղացի երիտասարդներին և պատանիներին , որ գիւղերի մէջ , տների մէջ են սպրդում , ձրի են ծախում իրենց (որովհետև արդէն կառավարութիւնից վարձատրուել են) որ այր և կին կռուեցնում են , որ աղջկանց փախցնելով իրենց տեղն , արդէն բոզացածների տեղն են ղրկում նոր բողութեան վարժեցնելու և նորա փոխարէն միմեանց ետևից խուժում են գիւղերում , ապականում են կեանքը , կանանց , մարդկանց , պատանիների , մանուկների , աղջիկների . հեքեաթ ես համարում որ այժմ Հայ գիւղացուց 15 տարեկան պատանին նախկին 25 տարեկան երիտասարդից լաւ գիտէ ամուսնութիւնն , որ իւր թարմութիւնը , կեանքը թողնում է բոզերի կեղտոտ բազուկների մէջ , որ վերջապէս գալլիական ախտը տարածել է իւր մահատուփեւերն այդ սուրբ , անարատ չէնքերի մէջ . . . :

Աւաքել և Ջհանգիր չունչը պահած լսում էին , գունաթափ , չրթունքներին չորացած և հայեացքին կատաղի էին . իսկ Սոխակի Տղան բոլորովին տաքացած՝ փոքր ինչ կանգ առաւ և ապա չարունակեց .

— Ո՛չ , ո՛չ մէկը հեքեաթ չէ , որովհետև զուտ իրողութիւններ են , որովհետև այժմ մեր կանայք դիտեն դաւել իրենց ամուսիններին և ամուսինք անհաւատարիմ մնալ իրենց կանանց , որովհետև այժմ գիւղացի աղջիկը խախտում է իւր կուսութիւնն , իւր ծնած ապօրինաւոր որդիներն անցնում են գիւղերի մէջ պատող բոզերի ձեռքն , այնտեղից պինուոր լինելու են տանում և քիչ չէ պատահում որ այդ պինուորների մանում են բոզանոցներում և իրենց մօր կամ քրոջ հետ են չնանում . . . : Հեքեաթ չէ որ մի քանի օր առաջ միայն կառավարութիւնն Անիի չրջակայքը բնակելու ղրկեց Դուխաբորների , Մոլոկանների , Ձրադ–ւարողների և Մալականների նման

չնացած , խիստ անբարոյականացած և չնութիւնը հացի նման իրենց սնունդ ունեցող տգէտ , վայրենի ազգերի ... պրկեց այնտեղ , որպէս զի գրաւեն Հայոց հողերն , անբարոյականացնեն նոցա կանանց ... մինչդեռ բուն իւր երկրի մէջ կառավարութիւնը խստապէս հալածում է այդ աղանդը ... գուցէ ձեզ յայտնի չէ ճրագ-մարդների աղանդն , որ աղօթելուց յետոյ փչում են ճրագներն և չնութեան սկսում առաջին ձեռք ընկած կնոջ հետ , թէ կուզ նա լինէր իւր մայրը կամ քոյրն ... : Այժմ եկ , Ջհանգիր , և ասա որ այդ բոլորն առասպելներ են ... :

Վերջացրեց և ձեռքով սրբեց ճակատի քրտինքը , մինչդեռ Առաքել կատաղած դոչում էր .

— Էլ ի՞նչ ենք նսաել , գնանք , գնանք պատժելու այդ դժոխքի որդուց ... :

— Հլմ , ժպտեց Սոխակի Տղան , նոքա իրենց նեցուկ ունին Ռսի կառավարութիւնը , Քնդանօֆ , հրացան , զինուորներ , իսկ մենք միայն երեք հոգի ենք ... աւելի լաւ է նատինք մեր տեղն և տեսնենք ինչ պիտի անենք ... :

Ահա այս խօսակցութիւններն էին անցել երեք վախատականների մէջ հոկտեմբեր 29ի օրն և երեկոյեան Առաքել Իգդիր էր գնացել մի քանի ուրիշ նոր լուրեր բերելու համար և միւս օրը բերում էր Սոխակի Տղային Ֆնդօից մի նամակ :

Սոխակի տղան յափշտակեց նամակն , աչքերը փայլեցան , բաց արաւ և կարդաց , յանկարծ զարմացական մի ճիչ արձակեց ու դարձաւ Առաքելին ,

— Առաքել , ասաց , միթէ Գրիգոր և ... իւր ընտանիքը Տփխիս գնացի՞ն :

Սոխակի Տղան խիստ դժուարանում էր Գրիգորի և նորա ընտանեաց անունը յիշելու , իսկ «Սաթինիկ» կամ «Գրիգորի կինը» բառերն երբէք չէր ասում :

— Այո՛ , պատասխանեց հանդարտութեամբ Առաքել , Գրիգորի զրքանչը դիշերն այնքան լաց եաւ , ասաց որ Բայազիտ ապրելու տեղ չէ , և այլն , և այլն , որ Ֆնդօ էլ համոզուեցաւ , մանաւանդ որ Սաթինիկն էլ և Գրիգորն էլ ցանկանում էին Տփխիս բնակուիլ : Գրիգորին իսկոյն ծպտեցրինք , մօրուսն ածիլեցինք , Սաթինիկ չեմ իմանում ինչ տեսակ սալիտակ փոշի մ'էր որ քսեց իւր ամուսնոյ երեսին որ նորա դէմքը սպիտակացրեց ... գլխին կոխեցինք մի ֆրէնդի թաս — գլխարկ ,

մարդավարի չիկ չորեր հագցրինք ու իսկոյն փոստա նստեցրինք ... Ֆնդօ էլ հետերնին դնաց ... մի քանի օր է որ եկել է Տփխիսից ...:

— Ինչո՞ւ ուրեմն մինչև այժմ ինչ չասացիր, հարցրեց նեղացած Կարապետ:

— Չհարցրիր որ ասէի, քար էիր կտրել, կ'ասես թէ յիմար էիր ...:

— Ա՛յո՛, այո՛, մամաց անլսելի ձայնով Սոխակի Տղան, յիմարացել եմ ... խենթ եմ ...:

Եւ ապա յարեց բարձրաձայն.

— Ուրիշ ի՞նչ պատմեց Ֆնդօ:

— Ոչինչ. ասաց որ նոքա շատ երջանիկ են, որ տներն արդէն ծախել է և 5000 մանէթի չափ գումար է ուղարկել այսօր նոցա, որ Մուրատ մի չիկ հագնուած տղայ է այժմ, որ մի խանութի մէջ գործակատար է. իսկ Գրիգոր ինքն մտել է Արհեստական ուսումնարանում երկաթագործութիւն սովորելու ...:

— Ճիշտ է, այդպէս էլ գրել է, մամաց Սոխակի Տղան և նամակի չարունակութիւնը սկսեց բարձրաձայն կարդալ ...:

«... Մայրիկն այլ ևս լաց չիլինում, երջանիկ է, Սաթինիկիս էլ երեկոյան տանում եմ այստեղի գբօսարանները պտտեցնելու, տեսնես ինչ սիրուն «քարիշնա»* է դարձել իր շլապոյովը, կոբկոյովը§ ... ամենքն նորան են նայում ... մենք նստում ենք վանքի մեծ փողոցում, Աւագեանենց տան մէջ, թիւ 3. տան մէջ երկու աղջիկներ կան, որոնք շատ են սիրում Սաթինիկիս ... նոցա ձեռագործ է սովորեցնում ... իսկ նոքա Սաթինիկիս դաշնամուր, դաշնամուր էլ առի 400 մանէթով ... շատ երջանիկ ենք, միայն ամեն օր յիշում եմ քեզ, ուզում եմ քեզ տեսնել, մեզ մօտ ունենալ, որովհետև կնքահայրն անել ... ա՛խ, Կարապետ, չգիտես թէ որքան կարօտել ենք քեզ: Երեկոյաններն երբ Սաթինիկիս նուագում է կամ ես, որ փոքր ինչ սովորել եմ ճեմարանում ... միշտ յիշում եմ քեզ ... Սաթինիկիս էլ ուզում է քո ձեռքը սեղմել ... քեզ չնորհակալ լինիլ ... մայրիկս ուզում է քեզ տեսնել ... գիտե՞ս որ քո անունն ամբողջ Տփխիսեցիք դիտեն, ամենքը սիրում են քեզ ... ամենքը կ'ուզէին քեզ տեսնել: Սաթինիկիս ամեն երեկոյ ասում է որ եթէ դաս քեզ

*Պարոնուհի: §կանանց կարճ բաճկոնը:

կ'ամուսնացնենք և կը մնաս մեզ մօտ . . . այժմեանից նա քեզ համար աղջիկ է մնում . . . »

Չկարողացաւ շարունակել, ձեռքերը դողաց, աչքերը նամակի վրայից բարձրացրեց, և երազից արթնացածի պէս, շրջեց իւր աչքերը չորս կողմ։

— Շարունակիր, ասաց Աւաքեղ, տեսնենք մեզ համար ինչ է ասում. արդեօք մեզ էլ ուզո՞ւմ է պսակել . . . : Եւ նա մի ահագին զուարթ ծիծաղ արձակեց :

Սոխակի Տղան պահ մի լուռթեամբ նամակի վրայ նայեց և ապա չարունակեց դողդոջուն ձայնով, մանաւանդ երբ նա արտասանում էր Սաթինիկի անունը :

« . . . երէկ յայտնեց որ գաել է մի սիրուն աղջիկ, բոլորովին գիտուն, հարուստ . . . ԵԿ, Կարապետ, որ գաս մեզ չմոռանիկ արած կը լինիս : Մի քանի օր առաջ Իգդիրմաւայից նամակ ստացայ. հայրս մեռել է, արդէն գիտես որ մայրս էլ վաղուց է մեռած և ես նոցա միակ որդին էի . . . դրել են ինձ որ 1000 րուբլիի չափ փող է թողել, հողեր, տուն և խանութ . . . բայց արդէն գիտես որ ես անկարող եմ ժառանգել, քանի որ ծածուկ եմ ապրում . . . ինչ որ է, թող մնան նոքա, մի օր պէտք կը գայ . . . վա՛յ, բոլորովին մոռացայ Աւաքելին և Ջհանգիրին : »

Սոխակի Տղան նորէն կանգ առաւ, կարծես կամենում էր այդ մնացածը թողնել և նորէն վերը կարդալ, բայց Աւաքել անհամբերութեամբ գոչեց.

— Շարունակիր . . . :

« . . . Նոցա իմ կողմից բարեւ արա, թող նոքա էլ քեզ հետ գան, բայց փոքր ինչ թող լսեն քո խրատներիդ և լաւ հագնուին, որպէս զի գիւղացի լինելնին չիմացուի . . . Տիխոնում լրտեսներ վխտում են . . . նոցա էլ, եթէ կ'ուզեն կը պսակենք . . . դու էլ ծպտիր որ չճանաչուիս . . . :

«Բարեւում են քեզ Սաթինիկս և մայրիկը. սեղմում քաջ և արի ձեռքդ : Քեզ միշտ երախտապարտ Գրիգոր : »

Վերջացրեց, մի խոր ախ քաշեց և նամակը ձգելով գետին թեկն տուաւ ժայռին : Աւաքել և Ջհանգիր փոքր ինչ հեռացան և ցած ձայնով խօսակցել սկսան :

Այդ լուռթիւնը տևեց ամբողջ կէս ժամ, յանկարծ Սոխակի Տղան թռաւ նստած տեղից, նորա աչքերը փայլում էին, ամբողջ մարմնով դողում էր :

— Առաքել, Ջհանդիր, գոչեց նա խռպոտ ձայնով։

Երկու ընկերները վազեցին և զարմացած նորան էին նայում։

— Ձիերը պատրաստ են, հարցրեց Սոխակի Տղան անհամբերութեամբ։

— Այո՛, ի՞նչ կայ . . . ։

— Գնանք . . . գոչեց նա և դէպ ի դուռն յառաջացաւ։

— Ո՞ւր հարցրեց Առաքել զարմանօք։

— Տփխիս, Գրիգորի մօտ։

Երկու ընկերները մի ուրախ հիչ արձակեցին։

— Մե՞նք էլ, հարցրին նորա յուզմամբ։

— Այո՛ . . . ։

Դուրս ելան և ձիերը նստելով սրարշաւ դէպ ի Իգդիր դնացին։

Բայց Իգդիր չմոտած մթնանում էր, Սոխակի Տղան առանց կանգ առնելու նոյն արագութեամբ քշեց և նորա կէս գիշեր էր որ մտնում էին Երևան, բայց նոցա ձիերն արդէն բոլորովին յոգնել էին։

— Կարապետ, ասաց Առաքել՝ երբ Երևանայ Կարմիր կամուրջին քաղաքն էին մտնում, ձիերը պիտի ճաթին։

— Հոգ չէ, գոչեց Սոխակի Տղան, բաւական է որ մինչև Ֆանաքեռի տակը հասնինք։

— Ո՛ւր, վերի՞ն քաղաք։

— Այո՛, Նորք։

— Որի՞ մօտ։

— ՄերՍտեփանի մօտ . . . քշէք . . . ։

Եւ նորա առանց կանգ առնելու քաղաք մտան, անցան հրապարակից սրարշաւ ու Նորք բարձրացան, որ Երևանայ արուարձանն է շրջապատուած այգիներով և պարտէզներով և որ փռւում է բլուրների վրայ։

Փողոցէ փողոց արշաւելով վերջապէս կանգ առին պարտիզապատ մի տան առաջ, Սոխակի Տղան արագութեամբ ցած թռաւ և դուռն ծեծեց։

Խաղողի և պտուղների ժամանակ էր, ուստի դիշերային այգիի պահապանը լսեց այդ բուռն բաղխումն և ներսից գոչեց։

— Ո՞վ է։

— Բա՛ց, գոռաց Սոխակի Տղան, Ստեփանին իմաց տուր։

Ձայնը լսեց և մի քանի րոպէից յետոյ դուռն բացուելով, չէմքի վրայ յայտնուեցաւ մի միայն շապիկ և անդրավարտիկ

հազած մարդ, որ տեսնելով այդ երեք մորթէ գլխարկներով ձիաւորներին՝ սաստիկ վախեցաւ։

— Մենք ենք, Ստեփան, գոչեց Կարապետ, թո՛ղ ներս մտնենք։

— Վա՛յ ... գոչեց Ստեփան, Աղասին է ... այ բագդաթ* ինչ վախցրիր ինձ ...։

Ներս քաշեցին ձիերնին և երեքն էլ Ստեփանի ետևից սենեակը մտան, ուր տանուտէրը վառեց ճրագ, զարթեցրեց կնոջն և հրամայեց դիլերային հիւրերին կերակուր պատրաստել, չմոռանալով «ճուազերը»։

Նստեցին թէ չէ, Սոխակի տղան ասաց Ստեփանին։

— Ստեփան, վաղը մենք Տփղիս պիտի գնանք երեք հոգով ... այս գիշեր եկանք, որպէս զի ցերեկով քաղաք մտնելիս չտեսնուի ... վաղն առաւօտ չուռով չուկայ կ'երթաս, ես փող կը տամ, մեզ երեքիս համար մի մի ձեռք ամենապատուական եւրոպական հագուստներ կ'առնես, առանց մոռանալու հատ պալտօն, ճանապարհի համար 3 հատ ձմեռային ֆլանէլաներ ... այնուհետև փոստատուն կ'երթաս և փոստային կառք մը կը վարձես երեքիս համար ...։

— Է՛, որի՞ անունով, հարցրեց Ստեփան ծիծաղելով. մտածում էր որ Սոխակի որդին նորէն մի կողոպուտի ետևից է գնում։

— Ի՛նչ ապուշ մարդ ես, գոչեց Կարապետ, երեք հատ անուններ կը գտնես, օրինակ՝ Հախնազար Մէլիքեանց Իգդիրցի, Կոստանդին Շահպարեանց և Միքայէլ Մարկոսեանց ... իսկացա՛ր ... ահա քեզ երկու հարիւր մանէթ ...։

Եւ Սոխակի որդին գրպանից հանելով տուաւ Ստեփանին քսան հատ տասանոցներ ու աւելացրեց.

— Առաւօտեան ժամն ութին պիտի մեկնինք, դուս վեցին կ'երթաս կառքը բռնելու ... հա՛, յարեց նա մի բան զոգցես մոռարերելով, ինձ համար մի եւրոպական լայնաշուրթն փափուկ գլխարկ կ'առնես, հինգ րուբլի է, իսկ Աւաքելի և Ջհանգիրի համար ռուսական գլխարկներ ... մի հատ էլ կապոյտ ակնոց — պէնաշնի ինձ համար ...։

— Ի՞նչ տեսակը ...։

— Հասարակ ապակիով, առանց թուահամարի, աչքերս ծածկելու համար ...։

* Խորամանկ։

Սոխակի Տղային ճանաչողները գիտէին որ նա չէ սիրում պիտղուխներ և հարցեր, ուստի Ստեփան մի խօսք իսկ արտասանել աւելորդ համարեց և փողերը գրպանը դրաւ, մինչդեռ Սոխակի Տղան փորր ինչ մտածեց և ապա իւր շուրջը նայելով,

— Ստեփան, ասաց, ածելի ունի՞ս:

— Այո՛, կ՚ուզե՞ս:

— Այո՛, իսկ կինդ պո՜ւպրա գո՞րծ է ածում:

— Անշո՛ւշտ, այժմ ամեն կին գիտէ այդ գործ ածելը:

— Շատ լաւ, տո՛ւր մեզ ածելի, կրակարանի վրայ բաւականին տաք ջուր, սապոն, կոնք, պո՜ւպրա, երեսսրբիչ. յետոյ կերակուրներս էլ նե՛րս բեր և դուք գնացէք հանգի՛ստ քնացէք ... հա՛ ... սա լուսամուտների վարագոյրներն էլ ... կամ աւելի լաւ է, տախտակեայ փեղկերը դոցի՛ր ...:

Առաքել և Ջհանգիր ոչինչ էին հասկանում այս հրամաններից, իսկ Ստեփան խորամանկութեամբ ժպտում էր, հասկանալով որ այդ հրամանների հետևանքն այն կը լինի որ Սոխակի Տղան և իւր ընկերները բոլորովին փոխուած՝ մի մի «աղնիւ» քաղաքացիներ կը լինին և ազատ ամեն տեղ պտտելու:

Մի ժամից յետոյ ամեն ինչ պատրաստ էր, Սոխակի Տղան լուսամուտների փեղկերը փակեց, Ստեփանին ուղարկեց իւր կնոջ հետ քնելու և սենեկի դուռն էլ փակելուց յետոյ սկսեց գործել:

Նախ հրամայեց Առաքելին ածիլել իրեն, իսկ Ջհանգիրին որ երեսը սապոնով լուայ մաքուր: Երբ ինքն ածիլուեց, սկսեց լուացուիլ, ապա նոյն կարգով բոլորն էլ ածիլուեցին և մաքրուեցին, ու Սոխակի Տղան, որ արդէն վարպետ էր այդպիսի գործերի մէջ, սկսեց պո՜ւպրայով սպիտակեցնել իւր և իւր ընկերների արևից և ցրտից սևացած դէմքերն, այնպէս որ երբ լոյսը բացուեց և նորա իրենց գործը բոլորովին աւարտել էին. Ստեփան ներս մտաւ և չկարողացաւ ծիծաղը զսպել ...:

— Կեցցէ՛ք ... գոչեց նա, այժմ սպիտակ աղնուականներ եղաք ...:

— Լա՛ւ ուրեմն, գնո՛ւմ ես ասածներս կատարելու, հարցրեց Կարապետ:

Այս բոլէիս, երկու ժամից յետոյ հագնուած և երեք ժամից յետոյ արդէն մեհնած կը լինիք ... ահա՛ գնում եմ:

Եւ նա գնաց :

Երեք ժամից յետոյ մի փոստային կառք սրարշաւ բարձրանալով դէպ ի Քանաքեռ երբ կամենում էր անցնիլ գիւղի եկեղեցւոյ առջևից , նորա միջի նստած եւրոպական հագուստով անձն , որ կրում էր քթի վրայ կապոյտ ակնոց , հրեց կառապանին և աներնամաքուր ռուսերէն լեզուով հրամայեց որ կանգնեցնիէ կառքը :

Յած թռաւ կառքից և դառնալով իւր ընկերներին , որոնք եւրոպական էին հագնուած , սակայն ռուսական գլխարկ էին կրում , ասաց հայերէն .

— Առաքել , Ջհանգիր , ինձ սպասեցէք կէս ժամ ... դնամ մօտ տեսնեմ :

Եւ իւր ձեռքի բարակ բաստոնով գետնի քարերը թռցնելով , աղնուական երիտասարդի մը քայլերով ու վայելուչ շարժուածքներով մտաւ գիւղի մէջ . ամենքը նորան էին նայում և ոչ ոք կարողացաւ ճանաչել այդ հագուստների տակ Սոխակի Տղային :

Կառքի մէջի պարոններն , որոնք Սոխակի Տղայի ընկերներն էին , անդադար միմեանց երեսին , հագուստներին նայելով ծիծաղում էին , մինչդեռ Ռուս կառապանը յարմար առիթ սեպելով այդ դադարն , իջել էր և ճանապարհի վրայ գտնուող գինետունն էր մտել ու օղի էր տնկում :

Վերջապէս Սոխակի Տղան երևեցաւ , բայց ոչ թէ դէպ ի կառքն եկաւ , այլ մտաւ եկեղեցին , ուրտեղից տասն րոպէից յետոյ դուրս եկաւ և լուռթեամբ կառք նստաւ : Նորա դէմքը մռայլոտ էր և Առաքել ու Ջհանգիր նկատեցին որ Սոխակի Տղան , այդ ապառաժ մարդն , այդ սիրտ ունեցող և արտասուք չունեցողն արտասուել էր ... :

Կառապանը նստաւ , վճարեց վոտկա* վարձն և մտրակեց ձիերին :

Սոխակի Տղան դարձաւ , գիւղին նայեց մինչև նորա անհետանալն և երբ նորա ծառերի վերջին կատարներն ևս չքացան մի խոր հառաչանք արձակեց , փաթաթուեց վերարկուով և գլուխը ծածկեց նորա մէջ ... :

(Շարունակելի) Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

* Ձանապարհների ծախքի համար բացուած դրամարկղին :

ԿԻԼԻԿԻՈՑ ՄԿՐՏՉԵԱՆ ԴԻՇԵՐՕԹԻԿ ՎԱՐԺԱՐԱՆ

.... Խմբագիր Տէր,

Բերկրութեամբ սրտի կը յղեմք ներկայիս առ Ձեզ ի հրատարակութիւն Կիլիկիոյ Մկրտչեան դիշերօթիկ վարժարանին յուսալից հարցաքննութեան վիճակացոյցն ու ուսմանց և ընդունելութեան յայտադիրն*, յորմէ ինչպէս կ'երևի վարժարանիս հիմնադիր Վ.Ե.Տ. Տ. Մկրտիչ Ս. կաթողիկոսն անկախ յումեքէ մի միայն իւր անձնական ծախքով հոգալով քահանայորս սանունքը յուսումն վարդապետական, ընունիլ կը փափաքի նաև յետ այսորիկ ի վարժարանս թոշակաւոր աշակերտներ ևս, որք խիստ թեթև թոշակաւ մը պիտի կրնան անթերի ուսանիլ յայտադրին մէջ ցուցուած ուսումներն, որ գրեթէ ճշտիւ կը հաւասարի Սանասարեան համբաւաւոր վարժարանի ուսմանց:

Ուստի հարցաքննութեան վիճակացոյցին հետ ներփակեալ յայտադիրն Ձեր պատուական հանդիսին միջոցաւ ազգասիրաբար հրատարակել խնդրելով՝ անհրաժեշտ պարտ կ'ըզգամք նաև մեր ամենախորին շնորհակալութիւնը մատուցանել Նորին Ս. Օծութեան, որ քսանևչորս ժառանգաւոր աշակերտներ ձրիաբար խիստ կանոնաւոր կերպիւ խնամելէ զատ՝ այժմ ևս հաղիւ կերակրոյ ծախքը դոցող թոշակաւ մի կը բանայ իւր վարժարանին դռներն ամեն ազգայնոց, և յոյժ դիւրամատչելի կ'ընէ ուսումն և դիտութիւն Հայ մանկտւոյն:

Յուսով եմք որ Վ.Ե.Տ. Տ. Մկրտիչ Ա. սրբազան կաթողիկոսի սոյն ազգասիրական ծանր գործոց հետևողութիւնը քաջալերութիւն մի կը լինի բոլոր ուսումնասէր անձանց փութով ղրկել իւրեանց զաւակները վարժարանս, ուր անթերի պիտի խնամուին բարոյապէս և նիւթապէս:

Ի դիմաց Կիլիկիոյ Մկրտչեան դիշերօթիկ վարժարանին

Տնօրէն ՆՇԱՆ ԹԷՐԶԵԱՆ

Տեսուչ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՑ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Մարաշ, 21 յունիս 1887:

* Այսաեղ կ'հրատարակենք միայն հանդիսին նկարագիրը:

«Արդէն անուրանալի ճշմարտութիւն մ'է որ ամեն մէկ ազգաց և ժողովրդոց բարոյական ոյժն ու զօրութիւնը մի միայն դպրոցներէ կը բղխի, և առանց դպրոցի բոլոր փրկութեան և յառաջդիմութեան միջոցք և խորհուրդք սին յոյսեր և խաբուսիկ երազներ, և բոլոր ներհուն կարծուած գործեր և կոթողի անձնաւորութիւնք անզօր ստուերներ և անամէջ խրտուիլակներ են միայն. ուստի եթէ կ'ուզեմք մեք իրապէս բարոյական և նիւթական աշխարհի մէջ յառաջդիմական քայլ մ'առնել՝ փութալու ենք դպրոցներ հաստատել ըստ հայատակաստր Օգոստափառ Կայսեր կամաց և պահանջման Ազգիս վիճակին, և ահա այս ճշմարիտ համոզմամբ Կիլիկիոյ Վեհ. Տ. Տ. Մկրտիչ Ս. կաթողիկոս բացած էր կանխաւ ի Գաղատիա մի գիշերօթիկ վարժարան, որոյ արդեանց պատուղներէն է այժմեան Գեր. Տ. Մկրտիչ Ս. եպիսկոպոս Վ.հայպետեան, որ ծանօթ է արդէն իւր տաղանդովը, և ապա յորժամ Ազգութեան ինչ ինչ անխորհուրդ քաղաքականութեան պատճառաւ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնն չէզոքացած՝ ազգային, կրօնական, առաջնորդական և վանական ոյժերը ջլատեալ՝ ազատ համարձակ ներս ի Կիլիկիա կը յորդէին Բողոքական միսիոնարներ, Ֆրանչիսկեան, Անգլիական և այլն, և այլն քարոզիչներ և դպրոցներ կը հաստատէին ի վնաս սուրբ Եկեղեցւոյ և Ազգին, Նորին Ս. Օծութիւնն մի և նոյն չէզոք կացութեան մէջ իսկ՝ և իւր կաթողիկոսութեան առջի տարին բացած է Այնթափի մէջ գիշերօթիկ վարժարան մի, յորմէ յառաջ եկած են վաստակաւոր, խմբագիր, դաստատու, վաճառական և Տէրութեան կարևոր գործոց մէջ խիստ պատուաւոր երիտասարդներ, որոց բոլորն ալ իրենց նախնական կրթութիւնն յիշեալ գիշերօթիկ վարժարանէն առած ըլլալնին անուրանալի է՝ որ և այժմ իւրեանց ունեցած խիստ պատուաւոր վիճակով թէ ամբողջ Կիլիկեցւոց և թէ այլոց բաղմաց հանրածանօթ են: Եւ ինչ կրնար ընել աւանկ ամեն նիւթական և բարոյական միջոցներէ զուրկ և ամբաստինդ կաչկանդեալ մի կաթողիկոսութիւն, երբ ամեն տեսակ անպատեհ փոթորիկներ կ'աղմկէին նորա մլուքն ու սիրտն. իսկ արդէն ճշմարիտ բարերարութիւնը համեստ է, ըստ որում նա կը գործէր այսպէս առանց չշուկի, առանց աղմկի որչափ կը ներէր իւր անձուկ կացութիւնն և այժմ ևս դադարած չէ գործելէ, գի ահա այսօր դարձեալ կը փայլի ի շնորհս նորա մի յուսոյ աստղ Կիլիկիոյ հորիզոնին վրայ, որ կը խոստանայ լոյս

տալ անլոյս աչաց, այս առտուն է դարձեալ Կիլիկիոյ Վ.Ե.Տ. Տ. Մկրտիչ Ս. կաթողիկոսի երեք ամայ հետէ հաստատած Մկրտիչեան ժառանգաւորաց գիշերօթիկ վարժարանն Կիլիկիոյ, որոյ ներկայ տարւոյ իննամեայ չքեղ հարցաքննութիւնն բոլոր քաղաքացւոց և համայն Կիլիկեցւոց և զօտարաց զուշն ու զուրուշն առ ինքն դարձուց, և պարտաւորեց զմեզ իսկ իւր հիմնադիր Ս. Հարերարին անունն անմահացընելու արժան այս կրթական գործոյն խիստ յաջող արդիւնքն հռչակել յանուն երախտագիտութեան և խնդրել Ձեր Մեծապատուութենէն որ բարեհաճիք աղգասիրաբար հրատարակել սոյն հրապարակական հարցաքննութեան հանդիսին նկարագիրն, որ ազգային, բարոյական, մտաւոր և նիւթական վերածնութեան աներկրայ յոյսեր կուտայ մեզ։

Հարցաքննութիւնն տեւեց երեք օր ի ներկայութեան բազմախուռն ժողովրդեան. առաջին հարցաքննութիւնն որ կատարուեցաւ 1887 յունիս 7 Կիրակի օրն, հազարէն աւելի երկսեռ ունկնդիրներ ժողոված էին քաղաքիս կեդրոնական վարժարանին ընդարձակ սրահին մէջ, ուր ընկերակցութեամբ բոլոր կրօնականաց և քաղաքիս պատուարժան երևելեաց ներկայացաւ վարժարանիս հիմնադիր Վ.Ե.Տ. Տ. Տ. Մկրտիչ Սրբազան Կաթողիկոսն, զոր իւր սանունք դիմաւորեցին և երգեցողութեամբ հանդիսատեղին բերին, ուր նախագահեց հանդիսականաց, և անմիջապէս յետոյ հանդէսը բացաւ վարժարանիս աշակերտներէն Պ. Եդուարդ ազգու ճառով մի, և ապա քաղցրանուագ երգոյ և դաշնակի ընդհատմամբ հետզհետէ քննուեցան Ե. դասու Քերականութեան, Ս. Պատմութեան, Թուրքերէնի, Ֆրանսերէնի և Զայնադրութեան (նօթա) դասերն, և Ա. դասու Գրագիտութեան, Թուաբանութեան, Կրօնագիտութեան, Ֆրանսերէնի, Եկեղեցական Պատմութեան դասերը. սոյն հարցաքննութեան միջոցին Պ. Խորէն Խորխոռունի, կրակոտ աշակերտն, աչխուժիւ մի ոտանաւոր արտասանեց և զարմացուց զամենեսեան և յետ աւարտման հարցաքննութեան առենախօսեց Պ. Արամ Հայկունի. իսկ հանդէսը գոցեց Վ.Ե.Տ. Ս. Կաթողիկոսն որ ազգու մաղթանքներ ուղղելով առ Աստուած վասն անգին կենաց Օգոստափառ Սուլթանին, շնորհակալութիւն յայտնեց վարժարանին ուսուցչական խմբին և հանդէսը վերջացաւ։

Երկրորդ հարցաքննութիւնը տեղի ունեցաւ 11 յունիս հինգշաբթի ժամն երեքին ի Ս. Ստեփանոս եկեղեցին, ուր դար-

ձեալ երկսեռ խուռն բազմութիւն եկած դիզուած էր ճիշդ ո-
րոշեալ ժամուն, նոյնպէս նոյն միջոցին Վ.Ե. Ս. Կաթողիկոսի
ընկերակցութեամբ հանդիսատեղին — եկեղեցին ներկայացան
Հայ Կաթոլիկ ազգայնոց Գերապայծառ Կղեմէս Սրբազան Արք-
եպիսկոպոսն ու իւր հետ չորս Արժ. Վարդապետք, որոնք դի-
մաւորուեցան վարժարանի սանուց երգեցողութեամբ, և իւր-
եանց արժանավայել աթոռներուն վրայ բազմեցան, և անմի-
ջապէս յետոյ հարցաքննութիւն սկսաւ և քննուեցան Բ. դա-
սու Հայոց պատմութեան, Աշխարհագրութեան, Ֆրանսերէն
դասերն, և Ա. դասու Հայկաբանութեան, Ֆրանսերէնի, Աշ-
խարհագրութեան, բնագիտութեան և Քայնագրութեան և
ուրիշ պատմական դասերը. յետ աւարտման Պ. Մուշեղ Գա-
րապետեան ոտանաւոր մի և Պ. Արմենակ Ածիլածեան ճառ մի
արտասանեցին եռանդագին և ապա հանդէսը փակեց Վ.Ե. Ս.
Կաթողիկոսն որ դաստիարակութեան կարևորութեան վրայ
խօսելով՝ մանաւորապէս չնորհակալութիւն յայտնեց Գերա-
պայծառ Ս. Հօր որ բարեհաճեցաւ իւր ներկայութեամբ պա-
տուել հանդէսն և ազգային յարաբերութեան կապերն ամրա-
պնդել աղաւամտութեամբ։*

Երրորդ հարցաքննութիւնն և ընդ նմին պարգևաբաշխու-
թեան հանդէսը կատարուեցաւ յունիս 14 Կիրակի օրը ժամը
վեցին դարձեալ ազգային կեդրոնական դպրոցին մէջ, ուր
ներկայ էին երեք հազարէն աւելի արական սեռէն հանդիսա-
կանք, որոնք ներսն ու դուրսը պատուհաններն դէպդէղ լե-
ցուած էին, հանդիսավայրն խիստ շքեղ զարդարուած էր.
վարժարանիս ճակատը կախուած էր մեր Օգոստափառ Վեհա-
պետին ծաղկապատ մեծադիր պատկերն ի բարձուստ, յայլ և
յայլեակ նորա ստորև ի բացուստ Վ.Ե. Ս. Կաթողիկոսի և նո-
րա ձեռնասուն Գեր. Մկրտիչ Սրբազան Վեհապետեանի մեծա-
դիր պատկերներն և նոցա վերաբերեալ օրհնական մաղթանք-
ներ, վարժարանին մէկ կողմէն միւսն սիւնէ սիւն տերև ազարդ
կամարներ բարձրացած՝ կեդրոնական կամարէն վար Վ.Ե. Ս.
Կաթողիկոսի անուան նուիրեալ ճարտարագործ պսակ մի կը
ծածանէր պարգևաց սեղանին վրայ, ուր՝ իրը պարգև աշակեր-
տաց տրուած էին սկսեղի վրայ ոսկեզօծ արծաթեայ արհես-
տաւոր խաչեր, թաւչեայ դոյնզդոյն ժապաւէններէ չինուած

* Այս կրթութիւններն ի՞նչ կ'նշանակեն չհասկըցանք։ Ծ.Խ.

ծաղկունք և զանազան մատեանք որ հանդիսականաց ուշադրութիւնն առ ինքեանս կը հրաւիրէին :

Վերջապէս ժամը ճիշդ վեցը քառորդ անցած հանդիսավայր ներկայացան քաղաքիս Վսեմ. Միւթէսարրըֆ Տֿէֆէ փաշան հանդերձ կառավարութեան ժողովոց պաշտօնական անձերով և քաղաքիս պէյերովն ու էֆէնտիներով, որք խիստ պատուաւոր կերպով ընդունուելով՝ Վսեմ. Միւթէսարրըֆ փաշան Ս. Կաթողիկոսի աջակից աթոռակցեցաւ և միւս պաշտօնական մարմինք Վսեմ. Կուսակալին աջակողմն կարգաւ նստան, ինչպէս որ Վեհ. Ս. Կաթողիկոսի ձախակողմն ևս բազմած էին Գեր. Նիկողոս եպիսկոպոս Ֆըռնուզի և Գեր. Կարապետ եպիսկոպոս Զէյթունի և բոլոր կրօնական դասն և Հայ երեւելիք. այս միջոցին վարժարանիս աշակերտներէն Պ. Գեղամ Անթիքաճեան մի սրտառուչ երգ երգելէ վերջը՝ ատենաբան վարժարանի աշակերտներէն Լևոն Վեհապետեան եօթնամեայ մանկիկն, որ թուրքերէն լեզուաւ մեր Օգոստափառ Վեհապետին անդին կենաց մաղթանօք վերջացուց իւր ճառն, առ հասարակ բոլոր հանդիսականք ծափահարեցին բուռն եռանդեամբ յիշեալ սիրուն տղեկը. յետ այս ճառախօսութեան ներկայացաւ ուսանողներէն Պ. Պերճ Ֆիւրքճեան, որ մեր Վեհափառ Կայսեր կենաց երկարութեան և զօրութեան համար թուրքերէն ոտանաւոր մի կարդաց դրաւիչ արտասանութեամբ. հուսկ յետոյ հարցաքննութիւն սկսաւ և աշակերտք քննուեցան Օսմանեան լեզուի, Պարսկերէն, Արաբերէն քերականութեան, և Թուրքերէն ու Ֆրանսերէն թարգմանութեանց մէջ, իրենց համարձակ և յաջող պատասխաններով վերջին ծայր գոհ ըրին առ հասարակ բոլոր ունկնդիրներն, որով ակներև կը փայլէր նախ դպրոցիս տնօրէն և ուսուցիչ Թէրզեան Նշան էֆէնտիի աշխատութիւնն և անխնայ անձնուիրութիւնն, որ ցայգ և ցերեկ չէ խնայած երբէք իրեն ջանքն ու փոյթն ազգասիրաբար : Երկրորդ՝ Աւժ. Տեսուչ Տ. Յովհաննէս Վարժապետեան խոհեմախոյզ քահանայի, երրորդ կառավարիչ և երկրորդ դաստատու Պ. Չամլարճում Ճէվահիրճեան հեզահամբոյր անձի և ճայնադրութեան դաստատու Պ. Յոհաննէս Տ. Յովհաննէս Վարժապետեանի և այլոց աշխատասիրաց և մանաւանդ այն ամեն աշխոյժ աշակերտաց անդուլ ջանքն ու աշխատութիւնը, զի հաղուագէպ է որ՝ ո և իցէ վարժարանի աշակերտք ասանկ քիչ ժամանակի մէջ այսքան քաջ և անսխալ կերպիւ կարող ըլլան

պատասխանել իւրեանց ուղղուած բոլոր հարցմանց : Ապա հետզհետէ Պ. Ռուբէն Տ. Եղիազարեան քաջ առողանութեամբ թուրքերէն ոտանաւոր մաղթանքներ արտասանեց յերկարութիւն կենաց Կայսեր և Հրանտ Թօփալեան՝ նոյն իսկ ատեն գեղեցիկ ոտանաւոր և ապա ժողովրդոց խոնջ մոքերն հանգստացընելու համար դպրոցական ղաւեշտ մը ներկայացուելով սկսաւ պարզևարաչխութեան գործողութիւն : Եւ նախ Վ. սեմ. Կառավարիչն ինքն իւր ձեռամբ կախեց յառաջին հինգ աչակերտաց կուրծքը նոցա յատկացեալ խաչերն , իսկ մնացեալ խաչերն ու ծաղկունք ինքն Վ. Հ. Ս. Կաթողիկոսն անցուց աչակերտաց կուրծքն և իւրաքանչիւր աչակերտաց ըստ իւրեանց արժանաւորութեան գրքեր ևս բաշխելով ելաւ ատեան Նորին Ս. Օծութիւն և սրտագին մաղթանքներ ուղղեց առ Բարձրեալն անսասան յարատևութեան Օսմանեան մեծաշուք Տէրութեան և թանկագին կենաց Ողոստափառ Ինքնակալին և քաջատոհմիկ Պայազատաց Նորին , բարձր Նախարարաց , Կուսակալաց և միւթէսարրըֆ փաշային և համայն Պաշտօնէից . յետ այսորիկ Նորին Սրբազնութեան յաջորդեց Վսեմ. Կառավարիչն և խիստ ազդու կերպով բացատրեց ոսմանի կարևորութիւնն և նորին ընորհակալութիւն յայտնեց Վ. Հ. Ս. Կաթողիկոսի իւր բարեկարգ վարժարանին առթիւ և խնդրեց քանիցս որ ի Մարաշ հաստատէ զայն , զի պատիւ մեծ կը բերէ ամբողջ քաղաքին , որ հայրենիք իւր իսկ է , և արդէն հանդէսն վերջացած լինելով՝ Վսեմ. Կառավարիչն և բոլոր երևելեաց և կրօնական դասն , օշարակ հրամցընելու համար , տարուեցան վարժարանին պարտէզն , ուր դարձեալ Պ. Խորէն Խորխոռունի եռանդուն սրտիւ կրթութեան վրայ թուրքերէն ոտանաւոր մի արտասանեց գեղեցիկ առողանութեամբ և շարժմամբ . և ապա յերկարութիւն կենաց Ողոստափառ Սուլթանին , Նախարարաց , Կառավարչին և Պաշտօնէից : Թուրքերէն երգ մի ևս երգուելով՝ բիւր ընորհակալութեամբ և գոհունակութեամբ մեկնեցան Միւթէսարրըֆ փաշայն և համայն Պաշտօնատարք , և ի վերջոյ Վ. Հ. Ս. Կաթողիկոսն՝ վարժարանիս տնօրէն դասատուն Նշան էֆէնտի Թէրզեանն , որոյ տնօրէնութեամբ և անձնուէր աշխատասիրութեամբ կառավարուած էր նաև յառաջագոյն Ա. յնթապի գիշերօթիկ վարժարանն , իւր քով կանչելով հանեց իւր ծոցի ժամացոյցն և նմա նուիրեց ի ներկայութեան հանդիսականաց և ըսաւ . « Գոհ եմ արդարև ձեր

սոյն ջանքերէն, զի Տէրութեան և Ազգին ճշմարիտ բարգաւաճումն արդէն ուսման և կրթութեան մէջ կը կայանայ, կը մաղթեմ որ երկինք Տէրութեան և Ազգին հաւատարիմ ձեզ նման երիտասարդաց թիւը բազմապատկէ յօդուտ Օսմանեան երկրին և մեր խեղճ Ազգին» և հուսկ ապա մեկնեցաւ Նորին Վեհափառութիւն և ընդ նմին համայն հանդիսականք ուրախ և զուարթ սրտիւ։ Հետևեալ օրն Ս. Կաթողիկոսն վարժարանին հոգևոր տեսուչ Արժ. Տ. Յովհաննէս քահանայ Վարժապետեանի խաչանչան մի և դասատուներէն մեղուաջան պատ. Համբարձում Ճէվահիրճեանի և ուիչ պաշտօնէից զանազան պարգևներ ընելով՝ գոհ ըրաւ վարժարանին բոլոր պաշտօնատարները։

Արդ, ո՛ Խրեագրապետ Տէր, այսօր իւր բարեկարգ վարժարանով Կիլիկիոյ արտասուքը սրբելու աշխատող Վեհ. Ս. Կաթողիկոսին սոյն անզուգական բարերարութեան առթիւ մեր երախտագիտութիւնը հրապարակաւ յայտնելու համար դարձեալ կը խնդրեմք որ բարեհաճիք Ձեր պատուական հանդիսին մէկ անկիւնը զետեղել սոյն մեր երկար յօդուածն, որ երկար ատեն ուսման կարօտ անկեղծ սրտերէ կը բղխի ուղղակի։

Ի դիմաց Ազգային Կրօնական ժողովոյ Հայոց Մարաշ

փոխ–Ատենապետ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ
փոխ–Ատենադպիր ՏԷՐ ՊԵՏՐՈՍ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ի դիմաց Ազգային Քաղաքական ժողովոյ Հայոց Մարաշ

Մարաշ
23 յունիս 1887։

Ատենապետ ՋՕՐՊԱՃԵԱՆ
Ատենադպիր Է. ԳԷՈՐԳ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԵԿԵՂԵԱՑ ԳԱՒԱՌ*

ՎԱՆՈՐԱՑԻՔ (Շաբաթակո-ՐՒՆ)

*Բ*ՈՒՆԷՅՈՒ Ս. ՆԻԿՈՂՈՍ. — Նախայիշատակեալ երկու վանուց հետ մի և նոյն գծին վերայ կը գտնուի և սա, ինչ և Սարը-Դայա լերանց ստորոտը, վրան լեռնադաշտի վերայ, դաշտին կամ որ նոյնն է քաղաքին արևելեան հիւսիսային կողմն, և վերջինէն աւելի քան 5 ժամու տարակայութեամբ։ Վանուց պարիսպը յեցած է լերին կողին, որոյ նիւաղ ջրերը չեն զօրեր ոռոգելու նորա արտորայքն, որք՝ թէև բաւական թուաւոր, անարգասաբեր կը մնան այս պատճառաւ, վասն զի, ինչպէս քանիցս առիթ ունեցայ յայտնելու, Եկեղեաց գաւառի թէ դաշտային և թէ լեռնային հողերն գրեթ թէ ոչինչ կ'արդիւնաւորեն անջրդի, ըստ մասին ցօղոյ բացակայութեան և ըստ մասին երկրին աւազուտ ու պինդ բնութեան պատճառաւ, որ հարմունքը (հողին բնական կամ անձրևային խոնաւութիւնը) չկրնար երկար ատեն պահել։ Վանուց հարաւակողմն է Բ*ՈՒՆԷՅՈՒ գիւղն ի ստորոտ նշանակեալ լեռնադաշտին, ի մուտս ձորոյն, որոյ կրկին դարերու վերայ չվնասած են բնակարանք և տարածուած զուարճալի ու պաղաշատ պարտէզներ. արևելեան կողմն կը գտնուի Քելէրէճ կամ Քալէրէճ գիւղն, իսկ արևմտեան կողմն է Ձ*ՈՒՆ բազմամարդ ու թուրքաբնակ գիւղն, որու համբաւաւոր այգեստանը՝ մրգաշատ, խաղողաբեր ու պարարտ, կը տարածուի խիստ ընդարձակ անդաստանաց ու լերին կողերուն վերայ։

Ս. Նիկողոսի վանքը չքաւորութեան կողմէ երրորդն է ի թիւս մենաստանաց գաւառիս. բայց ի մի քանի սե-

*Տե՛ս Ժէ. տարի, երես 49։

նեկաց, զորս արդի վանահայրը կառոյց ի դիւր և ի հանգստութիւն այցելուաց, մնացեալ չէնքն հինցած ու խարխուլ է։ Տաճարը, նոյնպէս հին ու ահեղ, զուրկ է ի զարդուց և ի կարևոր սպասուց իսկ, և չունի արժանի ինչ ի բանասիրութեան, ոչ արձանագիր, ոչ ձեռագիր, ինչպէս գաւառին միւս վանքերն։ Այս սրբավայրն ալ, Զախըրմանու վանուց նման, առարկայ եղած է մինչև վերջին ժամանակներս մերձակայ Քրդաց ասպատակութեանց և այս իսկ աղագաւ անշուք ու անինչ մնացած է։ Գէթ այս վանքը Զախըրմանու Պօղոս Պետրոսի նման բարեբաղդութիւն ունեցած լինէր երբեմն կոստանդնուպօլսոյ Տատեան աղնուատոհմ գերդաստանի առատաձեռնութեան պտուղը վայելած լինելու։ Վասն զի, մոռնալով ի կարգին յայտնելու, պարտ անձին կը վարկանիմ յիշել թէ բարեյիշատակ Յովհաննէս ու Պօղոս ամիրայք Տատեան բարեհաճած են երբեմն մասնաւորաբար ու պաշտպանութիւն ունենալ Զախըրմանու վանուց վերայ, և բաղում անգամ իրենց բարերարութեան ու ողորմածութեան չնորհօք օժտած ու ճոխացուցած են զայն, թէև այժմ, ինչպէս տեսանք ի կարգին, ի սպառ անչքացեալ ու չքաւոր մնացած է, արդիւնք ըստ մասին աւարառութեան բարբարոսաց, ըստ մասին յոռի մատակարարութեան անչուշտ։

Այժմու վանահայրն է Մեղուցիկ գիւղէն Տ. Գաբրիէլ քահանայ Տ. Մարուքեան, որ՝ թէև ոչ այնքան աշխոյժ ու ճարպիկ, այլ խիստ բարեսիրտ ու հեզահամբոյր է և թողլով իւր ժողովուրդն ու հայրենական կալուածներն երեսի վրայ, Ս. Նիկողայոսի կը ծառայէ և կը ջանայ չինել ու բարեզարդել զայն, եթէ բթաուիճու ագէտ ու կոշտ գլխաւորաց նախանձն ու հակառակասիրութիւնն, ինչպէս նաև գաւառական վարչութեան պահանջոտութիւնն չվհատեցընեն զինքն։

Ս. Նիկողայոսի թեմ հմմարուող գիւղերն են Բթաուիճ, Ղարա-Քիլիսէ, Աղճա-Քէնտ, Խնծորիւք և Շըխլի։

Լուսաւորչի Զարշամնոց վանք (կամ Տաղաւնի վանք, ըստ

ռամկաց Մէրճանայ Վանի)։ — Քաղաքին 4½ ժամու տարածութեամբ, գաւառին արեւելեան հարաւային կողմն, ի ստորոտս Մէրճան լերին, մերձ ի մուտս համանուն կրճին և ի ձախմէ նոյնանուն գետին (Մէրճանայ ջուր), թէև սակաւ ինչ ցած, այլ նկարագեղ ու զուարճալի դիրք կը գրաւէ այս վիճաստան, որ նշանաւոր է իւր հնութեամբ, պատմական կարևոր դիպուածովք որ ի նմա, նիւթական բարգաւաճ վիճակաւն, զոր ցարդ կը պահէ և վերջապէս բազմադիմի արկածիւք որք անցած են ընդ այն։ Մէրճանէն որոշուած ուրոյն և լայն առուս մը կ'անցնի սրընթաց վանուցս անդաստանէն և մերձենալով նոյն իսկ նորա պարսպաց, կու տայ զովութիւն, շուք և կենդանութիւն մարգագետնին՝, որ տարածուած է առաջի դրան և հովանացեալ դարաւոր ու խիտ թթենիներէ և նորատունկ բարտի և ուռի ծառերէ։ Քաղաքին նրբաճաշակ մասն շատ կը սիրէ յաճախել այս վանքն և՝ մանաւորապէս հանդչելով ընդ հովանեաւ վարսագեղ ու հովաշատ ուռիներու, առ ափն նոյն համբաւաւոր առուին, մարգավայրին և ասոր միջև չինուած մամռապատ դարերուն (սէքի) վերայ, վայելել սառնորակ ու համեղագոյն ջուր, ջինջ ու զով օդ, կանաչագեղ ու զուարթ տեսարաններ, ճաշակելիք ու ըմպելիք, և՝ եթէ գիտցած է հաճելի լինել յայս վանահօր, նաև վանուց պատուական մեղրն, մածունն, սերն ու գինին, որք շատ համբաւեալ են։ Վանքն է բաւական ընդարձակ մինչև պարունակել ծառազարդ հրապարակ և նեղքին ուրոյն դարաստան. ունի հաստատահիմն և բարձր պարիսպ, որոյ կրկին անկեանց վերայ բարձրացած են, յարևելս կոյս, երկու պատշգամբաւոր քէօշք՝ ունենալով լուսամուտները մարգավայրին վերայ։ Ունի նաև ուրիշ սենեակներ, յարկածածուկ տանեստան և ձմեռնային խուց ի վերնայարկի, լուսաւոր, վայելուչ և բռնեալ, որպիսի գրեթէ չգտնուիր ուրիշ վանուց մէջ։

Ցաճարը, թէև պարզ, այլ վայելուչ է, քարաշէն ու նորակերտ, կառուցեալ աւելի քան երեսուն ամաց հե-

տէ հնոյն վերայ , որու համար կ'ըսուի թէ Տրդատայ ու Լուսաւորչի միջոցաւ չինուածն իսկ էր : Աղդի չինուածը բայ ի մի քանի խաչքարանց , որոց ձևն ու գծագրութիւնն խիստ հինաւուրց կ'երևին , սպիտակ կոփածոյ վէմէ մը , ուր արուեստիւ քանդակեալ են Հայ եկեղեցւոյ այդ երկու նախամնողաց դրօշուածներն , և որ զետեղեալ է ներքին դրան վերնասեմին վերայ , հնութեան ուրիշ հետք չերևիր : Տաճարին մէջ, հարաւային որմին միջև , կը տեսնուի դռնաձև բացուածք , որ մի քանի աստիճաններով կ'առաջնորդէ այցելուն դէպ ի խոնարհ խցիկ մը կամ գուբ մը , մթին ու անձկագոյն , որ կ'անուանի խոր վէրապ :

Սրբազան հնութեանց մասին սոյն վանքը խիստ ճոխ է և ունի շատ կարևոր նշխարք երևելի սրբոց , զորս խիստ մեծ խնամով կը պահպանէ արդի երկիւղած վանահայրն և կարի զգուշութեամբ ու խնայելով ի հանդէս կ'ածէ , այնպէս որ հետաքննին բանասէրը չկարէ զայնս նկարագրել կամ արձանագրել : Ի մասնաւորի յիշատակութեան արժանի են մի քանի երկաթի բևեռներ , ռաժանի ու միաբուն , որք ծանօթ են պապակ անուամբ , և որոց վերայ քայլեցուցին բոկոտն մեր բազմաչարչար Լուսաւորիչն : Եթէ կարելի է բարեպաշտօն վանահօր վկայութեան հաւատ ընծայել , Ս. վանաց յետնակողման արտին մէջէն մերթ ընդ մերթ երևան կ'ելնեն վարուցանի ժամանակ այդ բևեռներ նոյն իսկ զարդիս : Աւելի կարևոր ու հետաքրքրական հնութիւն կարելի է համարել փոքրիկ մատն մի , անվուտ վայտէ , քառակուսի և խոռոչաւոր , որոյ արտաքին երկու երեսներուն վերայ կը տեսնուին զարմանահրաշ փորագրութեամբ , ամենանուրբ , ամենամանր և անտեսանելի քանդակաւ տնօրինական պատկերներ : Դչէ՛ էօ բառը կը նշմարուի յունարէն գրով՝ յիշատակարանին ստորոտն՝ իբր ստորագրութիւն այս պատուական հեղինակութեան :

Մխիթարական է տեսնել թէ վանքը կը վայելէ այժմ բաւական բարգաւաճ վիճակ · ունի մեղուանոց , այգի ,

բազմաթիւ արտեր, որոց չատերուն եղերքն և առուներու երկայնութեան վերայ բազմութիւն ուռի և բարտի ծառոց, մարդագետին, արօտավայր և ընդարձակ լեռնային հող։ Ունի նաև դուար, արջառ ի պէտս երկրագործութեան, առատութիւն կարասեաց, սպասուց և անօթեղինաց։ Վանքը կ'ըստանայ, բաց ի ուխտաւորաց կամ այցելուաց ընձեռած նուիրատուութենէ, պտղի իւր շրջակայ գիւղերէն, որք իւր թեմն են, և դրամական նպաստ պարբերական կամ պատահական հանգանակութիւններէ։ Ի մի բան՝ գաւառին միակ վանքն է սա՝ որ ունի ընդարձակ և արդիւնաբեր երկրագործութիւն և բաղդատաբար առաւելագոյն աղբիւր հասութից, որոց որակն ու պէսպիսութիւնն խիստ լաւ կը ճանչէ ճարպիկ վանահայրն և գիտէ զայնս արդիւնաւորել։ Ձշմարիտն ըսելու համար, միակ հաստատութիւն է սա, ուր կրնայ այցելուն, եթէ վճարող է ու պատուաւոր, բնակիլ որքան որ կամի և կենաց դիւրութիւններն գտնել։

Վանուցս արդի բարգաւաճ վիճակին պատճառ եղած են ներկայ վանահայր Արժանապատիւ Տ. Ղևոնդ և նորա արժանայիշատակ Ծնողն Տ. Պօղոս քահանայք, առաջինն իւր յարատև աշխատութեամբ, իմաստուն մտատակարարութեամբ, իսկ երկրորդն՝ աւելի անապահով ու բազմավտանգ ժամանակներու մէջ՝ իւր արիասրտութեամբ և հաստատամտութեամբ։

Ցաճախ պատեհութիւն ունեցած եմ այցելել ի Փոէ Լոսաուիլ, ինչպէս կ'անուանէ ժողովուրդն այս մենաստանն՝ Սեպհոյ Մեծ Լուսաւորիչն՝ որ ի Խարանաղի (կամախ), գտնագանելու համար, կրցած եմ մօտէն ծանօթութիւն ունենալ Տ. Ղևոնդ քահանայի վերայ, որ կը կառավարէ վանքն՝ որդի ի հօրէ ժառանգութեամբ և որ իւր անձն ու ընտանիքը մենաստանիս նուիրեալ և մենաստանս իրեն նուիրեալ կը համարի։

ՑԱրապկիր, 13 յուլիս 1887։ Ս. ԱՄԱՏԵԱՆ

DERNIER PRINTEMPS

Te voilà revenu, Printemps, avec tes ailes
Si brillantes d'attraits et de charmes si belles
Que, parant à l'envi, roses, œillets, lys blancs
Embaument de parfums suaves et troublants!

Pour toi, Printemps, la terre et le ciel sont en fête,
De toutes les saisons ô toi la plus parfaite;
Ta rosée, en tombant, donne la vie aux champs,
Et ton aube aux oiseaux inspire de doux chants.

Du profond de l'azur le soleil magnanime
T'éclaire; le zéphir te caresse et t'anime;
Mais, Printemps que j'adore, ah! m'apportes-tu, dis!
Un sort meilleur, ô toi qui viens du paradis? . . .

J'erre par les vallons, l'œil en pleurs, tête basse,
Mes soupirs, mes sanglots se perdent dans l'espace,
Mon cœur saigne et se meurt d'amertume et d'ennuis,
Dès longtemps le sommeil a déserté mes nuits!

Tu donnas la verdure au sol humide et sombre,
Aux arbres dégarnis, du feuillage et de l'ombre,
Aux nids, des hymnes clairs d'allégresse et d'émoi:
Tu m'as, seul, oublié, quoi, Printemps, rien pour moi? . . .

— Va plus loin, vers le Nord, va de fleurs étoilées
Embellir les coteaux, les monts et les vallées
Où de riants concerts de tendresse et d'amour
Vibreront pour fêter ton glorieux retour! . . .

L'an prochain tu viendras encor, saison chérie,
Mais tu me trouveras — non pas dans la prairie —
Sous une pierre insigne, au champ des morts, là-bas,
Endormi du sommeil éternel du trépas! . . . :

Traduct. ALEX. K. PANOSSIAN

ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկել նախշուն թևերով,
Նախշուն թևերը պէս պէս ձևերով,
Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։

Երկինք ու երկիր քեզ ուզեն, գարուն,
Ձի ես քան զամեն եղանակ սիրուն,
Նա անձրև ցօղէ առատ ի վերէն,
Դա օրհնել ասյ քեզ եկուր հաւերուն։

Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովը փչէ ի լերէն.
Ա՛խ, աղնի՛ւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն։

Գլխաքարշ երթամ ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ի բուն
Զիկայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել պի՞նչ անդորը է քուն։

Մեռած պատանքած գետնին կեանք տուար,
Տերևթափ ծառին սաւևրախիտ արար,
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ի՞նձ մենակ խղճիս էսպէս մոռացար։

Առաջ դնա, գարուն, դէպ հիւսիսն ի խոր,
Գնա կանանչցո՛ւր դու անդ սար ու ձոր.
Որոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարև.
Ք՛ուրախ գալատեամբ նոցա զուարճացո՛ւր։

Կու գաս գալ տարի, դու ինձ կը գտնես
Ո՛չ ի մեր այգին և ո՛չ ի պարտէզ,
Այլ անզարթ քընով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես։

ԸՆԿԵՐ

Եթէ մինը վատ և չար խօսէ քոյ ընկերի վերայ,
Չ'աւատաս նորան, որքան և կ'ուզէ աչինիւ երևայ.
Թէ վատաբանէ քո լաւ ընկերիդ աչխարհ ամենայն,
Կասկածէ դու միչտ և տուր իրաւունք ընկերիդ միայն:
Ով այսպէս անկեղծ սերտ ու յարատև ընկերն է սիրում,
Արժանի է որ երկինքը նորան չատ ընկեր բաչխում.
Ընկերի սիրան է մի հաղուագիւտ գանձ, որի փոխանակ
Չէ կարող երբէք մի բան ընձեռել աչխարհ բովանդակ:
Անդին գոհար է սուրբ սիրան ընկերի հրաչալի ուժով,
Գործում է հրաչքներ երբ յարուխս նորան բուռըն հաւատով.
Բայց տարակոյսք չնչին մի նըշոյլն իւր փայլն աղօտում,
Եւ հէնց միանգամ որ կոտրուեցաւ, այլ ևս չէ չըտկուում:
Ուստի թէ որ քեզ չնորհուի մի գոհար չքնաղ այսպիսի,
Ո՛հ, մի աղարտեր դու նորա փայլը, պահէ արժանի.
Մի փըչրիր նորան և նըկատէ միչտ դուն ամբողջ աչխարհ
Որպէս մի մատնիք, որն ուժգին բըռնում է այս թանկ գոհար.
Որին այս գոհար՝ դեռ նոր արժանիք ինքն իսկ է չնորհում,
Որովհետև անդ, ուր գոհարս պակսում, աչխարհն է պղծւում:
Սակայն մուրացկի նըման լինէիր թէ դու դառն աղքատ,
Եւ կայ ուրիշ նայ քեզ մի ընկեր — սիրտ — հարուստ ես դու չատ.
Եւ ով ժառանգեց ամենատիարթամ գահ չըքեզաղարդ
Եւ չունի ընկեր մի առաքինի, է մի թչուառ մարդ:

Գերմաներէնից: 8 մայիսի 1887 ամի Տ. ԱՐՄԷՆ Տ.

ՀԱՆԴԻՍ

ՄՐՑԱՆԱԿԱՑ ԲԱՇԽՄԱՆ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ

Երէկ (յուլիս 17) Ազգային ժողովոյ դումարուժէն յետոյ, Պատրիարքարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ Իզմիրեանց կտակի մրցանակաց բաշխման հանդէսն ընդ նախագահութեամբ Ա. Վեհափառ Սրբազան Պատրիարք Հօր։ Ներկայ էին կրօնական և քաղաքական ժողովոյ դիւաններն ու անդամոց մեծագոյն մասն, բազմաթիւ երեսփոխանք և ազգային պաշտօնական անձինք։

Նախագահական ամբոխին դէմ յատուկ սեղանի մը շուրջը բազմած էին Իզմիրեանց կտակի Գործադիր Մնայուն Յանձնաժողովոյ անդամք,

Գերապատիւ	*Գարեգին վարդապետ Թաթարեան*
Ա. Ժամանակապատիւ	*Յովհաննէս քահանայ Հիւնքեարպէյենաի*
»	*Յովհաննէս քահանայ Մկրեան*
Վսեմաշուք	*Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան*
Մեծապատիւ	*Յովհաննէս Էֆէնտի Կիւմիւշեան*
»	*Յովհաննէս Էֆէնտի Դասեան։*

Նախ և առաջ Յանձնաժողովոյ ատենապետ Նորատունկեան Վսեմ. Գաբրիէլ Էֆէնտի կարդաց հետևեալ տեղեկագիրը.

Բարձրաշնորհ Սրբազան Հայր և Տեառք,

Ինչպէս յայտնի է, բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանց բնիկ Ղզլարեցի ազգայինն իւր 1874 ապրիլ 13 թուականի կտակագրով 20,000 րուբլի գումար մը Կոստանդնուպոլսոյ Ազգային Պատրիարքարանի տրամադրութեան ներքև դրած և սահմանած է որ անոր տարեկան տոկոսեաց կէսն բաշխուի ամ ըստ ամէ ի մրցանակ ազգային գրականութեան և պատմութեան վերաբերեալ լաւագոյն երկասիրութեանց հեղինակներուն, և

միւս կէսն ի նպաստ յատկանայ կարնոյ կամ Մշոյ մէջ աղջկանց վարժարանի մը :

Ազգային երեսփոխանական ժողովը , որոյ հաղորդուած էր սոյն կտակագիրն կտակարար ազնուաչուք Ազա Կարապետ Եզեանցի կողմէ , յանձնեց գործադրութիւնն Ազգային Կեդրոնական վարչութեան , և սա ևս՝ յետ իմաստասիրելոյ բարեյիշատակ Հանգուցելոյն կամքն , ըստ կտակագրին՝ միայուն յանձնաժողովով մ'ընտրեց և պատրիարքական 20 յունուար 1886 թիւ պաշտօնագրով մը սոյն ընտրութիւնն ծանուցանելով յանձնարարեց ցանձնաժողովոյս , ի մէջ այլոց , որ բարեյիշատակ Հանգուցելոյն կողմէ՝ յանուն Սրբոց Սահակայ և Մեսրոպայ հաստատեալ սոյն մրցանակաբաշխութիւնը կատարուի հանդիսաւոր կերպիւամ յամէ աղջկային յարկի մը ներքև , յաւուր ծննդեան Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ : Սակայն տարբուոյս յունիս 24ին՝ քննչաց վկայութիւնք , որք պիտի գնահատէին մրցանակի արժանի գրական երկերն , տակաւին հաղորդուած չլինելով ցանձնաժողովոյս , Ազգային վարչութեան խառն ժողովոյ արտօնութեամբ սոյն հանդէսն՝ այս նուագ բացառիկ կերպով տեղի կ'ունենայ այսօր :

Եւ ըստ որում հանգուցեալ կտակարարին մահուանէ ի վեր առաջին անգամ է որ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի միջոցաւ կը կատարուի մրցանակաց բաշխումն , կարևոր կը համարիմք ծանուցանել ցանձնաժողովոյ կատարած քննութեանց և գործողութեանց վրայ խօսելէ առաջ՝ տեղեկութիւն տալ պատուարժան հանգիսականացդ թէ՝ բարեյիշատակ Հանգուցեալն ի կենդանութեան իւրում՝ երկու տարին մի անգամ քննել տալով Ազգին մէջ երևցած երկասիրութիւններն , հետևեալ կերպով տնօրինած ու վարձատրած է զայնս .

1877ին հանգուցեալ Վահան վարդապետ Բաստամեանցի տուած է 500 րուբլի՝ վասն Դատաստանագրոց Մխիթարայ Գոշի և իրաւաբանական հետազօտութեանց նորա ի վերայ նոյն գրոց :

1879ին մրցանակի արժանի աշխատութիւն չգտնուելով տպագրուած է Մովսէս Խորենացւոյ Պատմութիւնն , նոյնպէս և Ադաթանգեղոսի տպագրութեան ծախուց մի մասն հոգացուած է՝ յօգուտ Հայերէն գրոց տպագրութեան Ընկերութեան ի Թիֆլիս :

1881ին առաջարկեալ աշխատութիւններէն մրցանակի ար-

ժանի դատուած են Հ. Ղևոնդ Վ. Ալիշանի «Շիրակ»ն և Նոր-այր Բիւզանդացւոյ «Հայկական Բառաքննութիւն»ն, որոց և մրցանակի դումարն բաժնուելով առաջինն ստացած է 1000 ֆրանք, իսկ երկրորդն 500 ֆրանք:

1883ին մրցանակի արժանի դրութիւնք չներկայացուելով, կտակարարին բաղձանաց համեմատ տպագրուած է ի Ս. Բեթրս-պուրկ նախ Պատմութիւն Ասողկայ Տարօնեցւոյ և ապա Ղևոնդ Երէցի:

Այսպէս բարեյիշատակ Հանդուցեալն ի կենդանութեան իւրում քաջալերած է ներկայացեալ դրական աշխատութիւն-ներն և օգտակար համարած է նախնեաց Մատենադրութեան տպագրութեանը սատարել, երբ մրցանակի արժանի երկ մը չէ ելած ի վեր նոյն տարւոյ մէջ:

Կտակագրին գործադրութիւնն Ազգային Պատրիարքարանի յանձնուելէն ի վեր, Յանձնաժողովոյս ներկայ տարւոյ փետ-րուար 14 թուականաւ պաշտօնական հրաւիրանաց վրայ, քննու-Թեան և մրցման ներկայացան հետևեալ աշխատութիւնք.

1. «Հնդևրոպական նախալեզու» տպագրեալ երկասիրու-թիւնն Հայր Սերովբէ Տէրվիշեանի.

2. «Փառանձեմ և Ոզիմպիա» թատերգական ձեռագիրը, երկն Էմմանուէլ Էֆէնտի Եսայեանի.

3. «Ճաշակ ոսկեղէն դպրութեան» միամեայ հաւաքածոյ դրաբառ հանդիսին, զոր կ'ընծայեն ի լոյս Մատաթիա Գաբա-դաչեան և Յակոբ Թուրզէն Էֆէնտիք.

4. «Նկարագրական ուղևորութիւն ի Հայաբնակ գաւառս» Մանուէլ Էֆէնտի Միրախորեանի.

5. «Ուլնիա» Յակոբ Էֆէնտի Ալլահվէրտեանի:

Ինչպէս կը տեսնուի, այս երկասիրութիւններն ամենքն ալ մայրաքաղաքիս մէջ տպագրուած կամ աշխատասիրուած գոր-ծեր են: Առաջին երեքին նկատմամբ քննչաց վկայութիւնք թէև պատուաբեր, այլ սակայն անհամաձայն դատուեցան այն պայմանաց կամ ուղղութեան որոց համեմատ պէտք է պատ-րաստուած ըլլան մրցման ներկայացեալ երկք. հետևաբար ա-ւելորդ է առանձնօր մի առ մի յիշատակել այդ գրոց ցոյց տուած առաւելութիւնները՝ պայմանաց մասին ունեցած թե-րութեանց հետ:

Միայն թերևս օգտակար ըլլայ ընթեռնուլ ի մէջ այլոց քաջմահմուտ Մատաթիա Էֆէնտի Գաբագաչեանի քննագա-

տուԹեան մէկ հատուածն ի վերայ «Հնդեւրոպական նախալեզու» լեզուաբանական դրքին։

«Նախ քալով իմ առանձին կարծեաց՝ կ'ըսեմ. Գիտեմ և կը վկայեմ ԹԷ Հ. Սերովբէ Տէրվիշեան է հմուտ ԼեզուաբանուԹիւն (linguistique) կոչուած ուսման, սակայն յիշեալ երկասիրուԹիւն նորա, ըստ իս, Թէև բազմաչխատ գործ, չէ ոչ ապացուցական, և ոչ մանաւանդ հայերէնի բազմարուեստ կազմուԹեան գաղտնեաց վրայ նոր լոյս կը սփռէ։ Հեղինակին նպատակն, ինչպէս յայտնի է յանուանէ գործոյն «Հնդեւրոպական նախալեզու» է երևան հանել, դէթ ըստ դլխաւոր տարերաց, լեզու մը որ եղած է մայր ցեղ մը լեզուաց որ կը Թուին լինել դասերք այն կորուսեալ և անհետացեալ մար։ Այս մայր լեզուն կը կարծէ դտնել հեղինակն՝ համեմատելով ընդ միմեանս այն համացեղ կամ համացեղ կարծուած լեզուներն։ Թող որ այս ճանապարհաւ դարերով յառաջ անհետացեալ լեզու մը, եԹէ կար ևս, երևան հանել դժուարին է, եԹէ ոչ անհնարին, դեռ որոշուած կամ ստուգիւ դիտցուած չէ Թէ կա՞ր արդարև ժամանակաւ այնպիսի մայր լեզու, ուրոյն այժմու կարծեցեալ դուստրներէն։ Թողլով սակայն այս կէտը, դամ եղանակին որով հեղինակը կը ջանայ ցուցընել այս վերացեալ խնդիրն։ Ըսի Թէ գործը չէ ապացուցական։ Հեղինակը կը ճգնի ծանօԹներ հանել անծանօԹէ մը որ խնդրոյ առարկայ է։ Զոր օրինակ՝ տեսնելով Լատիներէն argentum, Ցունարէն ἄργυρος, Հայերէն արծաԹ, որ ունին իրարու հետ մօտ նմանուԹիւն, սոցա առաջին վանկն arg կ'առնու իբր արմատ նախալեզուին մէջ, և անկէ կը դնէ այն եռատառիկ նմանուԹիւնն. այսպէս արմատը կ'ապացուցուի նմանուԹենէն, և նմանուԹիւնն՝ արմատէն։ Ասոր կ'ըսուի նոյնը նոյնով ցուցընել։ Բոլոր գործին տրաբանական ընԹացքն այս է։ Բայց մենք ունինք զանդիկ լեզուին մէջ երեսներ, որմէ չիք տարակոյս Թէ առնուած է պատրաստ մեր արծաԹ բառն. ո՛դիտէ Թէ Լատինն իւր argentumն և Ցոյնն իւր ἄργυροςն առած չէ պատրաստ նոյն երեսներէն առևտրական և կամ ուրիշ յարաբերուԹեամբ։ ԵԹէ դնենք ևս Թէ Լատինն, Ցունին և Զանդկին այս նմանուԹիւնն է հին հասարակաց մօրէ մը, ցորչափ այս մայրը չկայ ի միջի, նմանուԹիւնը լոկ արտօնուԹիւն չտար մեզ արմատներ ստեղծելու այն նոյնուԹիւնն ապացուցանելու հա-

մար : Նոյնութիւնը կը ցուցընէ միայն թէ այս լեզուները կամ այն լեզուները խօսող ազգերը ժամանակաւ յարաբերութեան մը մէջ էին իրարու հետ : Ուրիշ օրինակ մը . Հեղինակը նոյնպէս ենթադրելով garbh արմատ մը նախալեզուին մէջ, անկէ կը հանէ Պարսկերէն կէրէֆթէն , Թերմաներէն կրաֆէն և Հայերէն ճրաբել, ճրաբ բառերը : Գիտենք սակայն , գէթ մեր լեզուին համար թէ՝ մեր դրաւել, դրաւ բառն է Պարսկերէն կէրեֆթեն , կէրեվ բառէն որ կը նշանակէ հաւաստալ, հաւաստ , և ոչ կէրէֆթէն բառէն որ է բռնել :

« Վերջապէս ինչ օգուտ մեր լեզուն քոյր ցուցընելու համար ուրիշ լեզուաց , հասարակաց արմատներ ստեղծել, և ջնջել մեր բառերն ևս այն արմատներէն հանել : Մեր լեզուին բառերուն ծագման , ուստի և նոցա զօրութեան , և լեզուին մէջ գործող արուեստագիտութեան , եթէ եղած է այնպիսի արուեստագիտութիւն մը , քաջ խելամտելու և անկէ գործնական օգուտ քաղելու համար , մեզ պիտոյ է այնպիսի գործ մը որ ցուցընէ մեզ նախ թէ կան մեր լեզուին մէջ բառեր կամ ձևեր որ ստուգիւ առնուած են այս կամ այն լեզուէ և ճարտարութեամբ հայացած , և երկրորդ թէ՝ այս առնուած բառերուն բնութեան , յատկութիւններուն և ուրիշ պարագաներու համեմատ չինուած են ի նոյնից նոր և նման գաղափարներ յայտնող նշաններ : Այսպիսի գործ մը , որչափ թերութիւն ունենայ , ըստ մեզ, է գէթ մեր լեզուին համար , ստուգիւ պատմականապէս և բանասիրապէս ազգագրական և գործնական երկասիրութիւն լեզուագիտական : » *

Սոյն այս անաչառ քննադատութեան հետ բախտաւոր պիտի համարէինք զմեզ լսել նաև ղևարծիս մեծանուն Քերովբէ Պատկանեանցի , այլ սակայն վերահաս անձնական տկարութիւն մը դժբաղդաբար արգելք եղաւ իրեն հաղորդել մեզ իր քննութեան արդիւնքն ի մասին վերոյիշեալ երկասիրութեան :

Ոչ նուազ ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ պիտի լսէիք անշուշտ « Փառանձեմ և Ղևմպիա » դողտր Թատերգութեան , ինչպէս նաև « Ճաշակ ոսկեղէն դպրութեան » հանդիսի պարունակած պատմական և մատենագրական ինչ ինչ ընտիր

* Է. Ս. Տէրվիշեան իր Լէզու Թերթին մէջ սոյն քննադատութեան քննութիւնն գրած է, զոր մնադիր հինք ուրիշ առթիւ արտատպել : Ս. Խ.

հատուածոց նկատմամբ քննչաց կարծիքն, եթէ, ինչպէս ըսինք արդէն, այս երկասիրութիւնք համաձայն գանուէին կանկին պահանջած պայմանաց և մրցման ենթարկուէին։

Անցնելով ուրեմն միւս պրեանց, նախ ընդունելու պատիւն ունեցանք վսեմ. Միքայէլ էֆէնտի Փորթուգալեանի* գրադատումն «Նկարագրական ուղևորութիւն ի Հայաբնակ գաւառս» գրքին նկատմամբ, որ ահաւասիկ.

«Օրթագեղ, 12 յունիս 1887

«Վսեմափայլ էֆէնտի,

«Ուշի ուշով ընթերցայ «Նկարագրական ուղևորութիւն ի Հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի» խորագրով տեղագրութիւնը, բաժանեալ յերիս մասունս, զոր երկասիրած է Մանուէլ Կ. Միրախորեան էֆէնտին, և որոյ նկատմամբ իմ դաղափարս և դատաստանս հարցընել բարեհաճեր էիք Ձեր 22 ապրիլ 1887 և 24 թիւ պատուական նամակաւ։

«Այն լայնածաւալ Պետութիւնն՝ որոյ մէջ կը բնակի Հայ ազգին մեծագոյն մասն, ճոխութեան և գիտութեան անհուն և ամենապան գանձեր կը պարունակէ, որք տակաւին անծանօթ են մեզ։ Այդ գանձերէն կարելի եղած օգուտը քաղելու համար նախ և առաջ կարևոր է ճանաչել մանրամասնօրէն այդ երկիրը։ Վասն որոյ Միրախորեան էֆէնտիի ձեռնարկութիւնը յոյժ գովելի և պիտանի է։

«Բայց այդպիսի գործոյ ոչ մէկ մարդու ջանքն և ոչ մէկ ուղևորի դիտութիւնը բաւական է։ Հարկ է որ այխատութիւնը բաժանի. հանքաբան և երկրաբան մը աչխարհիդ խաւերը քննէ. ճարտարապետ մը հին և նոր ձեռակերտից ոճն, արուեստը, չափերն և պատկերը ծանօթացընէ. հնադէտ մը արձանագրութիւններով և այլ յիշատակարանօք պատմութիւնը հաստատէ. մէկը՝ այլ և այլ քաղաքաց և տեղեաց վաճառականական ներկայ առնչութիւնքն և սոցա ընդարձակման համար հնարաւոր միջոցներ ցուցանէ. ուրիշ մը բնակչաց բարքը, կրօնքը, գիտութեան կամ տգիտութեան աստիճանն ուսումնասիրէ և նկարագրէ. այլ սմն արդի յոյժ պակասաւոր քարտէսներն և ցեղաբանական, տեղագրական կամ բուսաբանական անօսր ծանօթութիւնքը ճախացընելու կամ ճշդելու զբա-

*Նախագահ մնքսատան բարձրագոյն ժողովոյ։

ղի, և այլն, և այլն: Այդ զանազան ձեռնարկութիւններդ առանձին առանձին մտածագիտաց ձեռք կատարուելէ եաքը միայն կարելի կ'ըլլայ ընդհանուրին բաւական ճշդիւ տեսութիւն մը կամ նկարագիր մը յարդարել: Մտածագիտութիւնը հարկաւոր է. վասն զի առանց ասոր մարդս չատ անգամ բնաւ չտեսներ և կամ ստուերակերպ կը տեսնէ ինչ որ երկրին երեսը յայտ յանդիման կը ցուցանէ նմա. իսկ ինչ որ անոր ծոցուն մէջ գաղտնի պահուած են, թաղուած կը մնան ի սպառ: — Կարծեմ թէ ամեն անոնք որ Օսմանեան գաւառաց տեղագրութեամբ զբաղիլ կ'ուզեն, պարտին վերոգրեալ դիտութեանց մի քանին իրենց ծայրալիր պարապմանց նիւթ ընտրել:

«Չեմ կրնար գրուցել թէ Միրախորեան էֆէնտին այդպիսի պատրաստութեամբ ձեռք զարկած ըլլայ գործոյն. իւր երկասիրութեան մէջ ուզած է ամփոփել ամենայն կարգի տեղեկութիւնք, բայց սոքա չատ անգամ աւելի ընթերցողին հետաքրքրութիւնը կը յուզեն քան կը գոհացընեն: Աղբակ գաւառին նկարագրութեան մէջ, որ այդ երկասիրութեանդ ամենէն նշանաւոր մասն է և որուն համար ուրիշ կողմանէ չնորհակալ ըլլալու պարտական ենք հեղինակին, այդ պատրաստութեան պակասն աւելի զգալի է:

«Այսու ամենայնիւ այդ դիտողութիւններդ ընելով, չեմ ուզեր հեղինակին արդիւնքը նսեմացընել: Պէտք չէ մոռնալ թէ ինչ դժուարին բան է Ասիական ներքին գաւառաց մէջ ճանապարհորդելը, թէ օրքան խոչընդոտներ կը յարուցանեն մանաւանդ մանրակրկիտ քննութեան, բնակչաց մերթ վայրենի բարքը, մերթ աւելորդապաշտութիւնքը: Միրախորեան էֆէնտի արեւելցի ռահվիրայ մի է որ ուրիշներու կոխելու չհամարձակած տեղերը կ'ուզէ մտնել. անօթութիւնը, ծարաւը, վտանգն երկիւղը չեն կրնար զինքն յետս կասեցընել իւր կէտ դրած նպատակէն. իւր գրութեանը մէջ կան այնպիսի նորանոր տեղեկութիւններ զորս կարծեմ ոչ ոք տակաւին հաղորդած է ի տոհմային կամ յօտարազգի ճանապարհորդաց:

«Ահա այդ յատկութիւններով Միրախորեան էֆէնտին յոյժ պիտանի ըրած է իւր երկասիրութիւնը. կարելի է թէ ուրիշներն այսուհետև աւելի հեղինակութեամբ ճառագրեն և լուսաբանեն ինչ որ ինքն արտորնօք տեսած է և մասամբ իւրիք մտոյ մէջ թողուցած: Բայց պատմական մէկ քանի նշանաւոր

վայրեր ինքն առաջին եղաւ մատնանիշ ընելու ու այդ արդիւնքն ալ փոքր չէ : Միրախորեան էֆէնտի իրեն յատուկ ոճ մի ունի , որ թէպէտ ընդհանրապէս դիւրասահ չկրնար ըսուիլ , և մերթ ընդ մերթ խրխին ալ է , բայց ունի եզական և գաւառական բացատրութեան ձևեր , որով համայն գրութիւնը նկարագրուած տեղեաց գոյնը կ'առնու և անոնց նշանը կը կրէ :

« Իմ խոնարհ դատողութեամբս կարծեմ թէ բոլորովին հաճայն կ'ըլլայ բարեյիշատակ Ցովսէփ Իզմիրեանցի դիտաւորութիւնը , վարձատրել Միրախորեան էֆէնտիի երկասիրութիւնը , թէ սորա բուն արժէքին համար և թէ ի քաջալեր նմանօրինակ աշխատութեանց : (Մաֆհաթոնիկնէ)

« Մնամ աղնուափայլ Տէրութեանդ խոնարհ ծառայ

« ՄԻՔԱՅԵԼ ՓՈՐԹՈՒՔԱԼ »

Գերապատիւ Խորէն արքեպիսկոպոս Նար Պէյ , որուն նմանապէս դիմած էինք , հետևեալ կերպով կը հաղորդէ մեզ իր ուղղախոհ դատաստանն .

« Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի ,

« Ձեր 22 ապրիլ թուակիր առ իս ուղղեալ նամակին զուգակցելով Մանուէլ էֆէնտի Միրախորեանի երկասիրութիւնն մակադրեալ « Նկարագրական ուղևորութիւն ի Հայաբնակ գաւառս » , կ'առաջարկէիք ինձ՝ յանուն Պատ. Ցանձնաժողովոյդ , խմաստասիրել զայն տեղագրութիւն , և բարեյիշատակ Ցովսէփ Իզմիրեանցի կտակեալ մրցանակաբաշխութեան ոգւոյն և նպատակին համաձայն գնահատելով զայն , քննութեան արդիւնքն հաղորդել Ձեզ :

« Ինձ եղեալ յանձնարարութեան համեմատ՝ ընթերցայ վերոյիշեալ նկարագրական ուղևորութիւնն , որ երեք մասի բաժնուած է , և սկսեալ ի Տրապիզոնէ՝ կը յանգի վերադարձիս ի Բարձր Հայս , յաւելմամբ նկարագրի Հայ դիւցազուց տարեկան կենաց չորս եղանակի , և տանուտերական իշխանութեան , վանական սրոց և քրիստ վրայ հաստատուած ծանօթութեամբք :

« Թէպէտ հեղինակն կ'անուանէ զիւր տեղագրութիւն պիտանի էջեր , սակայն չգտայ անդ դիտնական ուղևորութեան մը հանգամանքներն՝ հնագիտական , երկրարանական , բուսաբա-

նական և այլն տեսակէտներով։ Թերի է պատմաբանական և մատենագրական յիշատակներէ, լեզուի և ոճոյ կը պակսին խնամք, և յայտնի կ'երևին նշանք հապճեպ գրութեան ընդհանրապէս, միանգամայն հեղինակին տեսութիւններն ուրեք ուրեք իրենց վիճելի կողմերն ունին։

«Բայց սակայն գովելի կը գտնեմ հեղինակին ազգասիրական ոգին՝ որ բոլոր գրուածոյն մէջ կը փայլի, և ցուցուցած ըստ բաւականի հմտութիւնը, խոհեմութիւնն և անձնուէր աշխատութիւնն ի հետազօտութիւն մեր հայրենի երկրին և ի ծանօթացումն նորա արդի վիճակին՝ զէթ արտաքնապէս։

«Հետևաբար՝ եթէ Մխրախորեան էֆէնտիի սոյն տեղագրութիւնը չկարենայ համարուիլ կատարեալ գործ մը, և արժանաւոր առաջին մրցանակին, բայց և այնպէս՝ ինձ կը թուի թէ կարելի է պատուել զայն մրցանակաւ իւիք, ոչ միայն ի վարձատրութիւն աշխատութեանց և զոհողութեանց նորա, որով կը հանդիսանայ մին ի ջանասէր տեղագրաց Հայաստանի — այլ դի՝ քաջալերուի նա՝ և այլք ևս այսուհետև՝ ի նմանօրինակ երկասիրութիւնս՝ օժտեալս առաւելագոյն կատարելութեամբ, յօգուտ Հայ ազգին և աշխարհագրութեան նորա։

«Հաղորդելով Պատուարժան Ցանձնաժողովոյդ զարդիւնս քննութեան իմոյ և զնահատութեան՝ թողում իմաստութեան նորա տնօրինել զարժանն։

«Մնամ յարգանօք և օրհնութեամբ աղօթարար

«ի Պէչիքթաշ, 29 մայիս 1887։ ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ»

Իսկ Յակոբ Ալահվէրտեանի «Ուլնիա» երկասիրութեան վերաբերմամբ ահաւասիկ ինչ որ կը դրէ մեզ մեծաշուք աղա կարապետ Եզեանց.

«Մեծապատիւ Պարոն Ատենապետ,

«Պ. Յ. Ալահվէրտեանի «Ուլնիա կամ Զէյթունն» երկասիրութիւնն ինձ յուղարկելով հարցրել էիք իմ կարծիքս նորա մասին։ Ես թէպէտ զբաղուած լինելով չափազանց՝ միջոց չունեցայ ուշի ուշով ուսումնասիրելու այդ գիրքը, բայց կատարած լինելու համար Ձեր յանձնարարութիւնն՝ ահա կարճառօտիւ յայտնում եմ իմ կարծիքս նորա մասին, որչափ որ հնար ունեցայ ծանօթանալու նորան։

«Ա. Այս գիրքը մի համապրութիւն է Զէյթունի Հայ ժողովրդեան և ուսումնասիրում է նորա ընտանեկան, մասաւոր և բարոյական կողմերը հանդերձ տեղւոյն աշխարհագրական տեղագրութեամբ, և տալիս է նիւթ հետազօտելու Զէյթունի բարբառը: Պատմական մասն պակասում է նորանում. բայց այս թէպետև մեծ թերութիւն է գրքի լրութեան՝ սակայն պէտք է վերագրել այնպիսի հանգամանքների որոնք աւելի զօրաւոր են եղել քան հեղինակի ցանկութիւնն՝ այս մասում ևս գիրքը լիակատար անելու:

«Բ. Գրքի Ա. և Բ. մասերն, որոնք իսկապէս հեղինակին են պատկանում՝ օգտակար են, որովհետև մատակարարում են առատ նիւթ՝ ուսումնասիրելու համար Զէյթունի Հայոց մասաւոր և բարոյական յատկութիւնները և համեմատելու համար ուրիշ գաւառների ժողովրդեան հետ: Հեղինակն այստեղ գովելի մանրազնննութեամբ նկարագրում է Զէյթունցուն, նորա ծննդեան օրից մինչև մահն ու թաղումն, և հաղորդում է բազմաթիւ մանրամասն տեղեկութիւններ որոնք խիստ կարևոր են ժողովրդագրութեան համար: Բայց այս մասերն ունին իրենց թերութիւններն ևս, որոնք գլխաւորապէս գրականական ոմի և լեզուի մէջ են պարունակվում. ոմն այնքան կրճատ և համառօտ է որ այս մասերը կարծես ոչ թէ բուն շարադրութիւնը լինին, այլ ծրագիր (programme) մի ընդարձակ շարադրութեան: Լեզուն ևս զերծ չէ թերութիւններից, և ինչպէս երևում է գրաբառը տեղ տեղ զգալի կերպով ներգործել է նորա աշխարհաբառին վերայ, որ երբեմն բաւական խորթ է թուում:

«Գ. Երրորդ մասն, որ պարունակում է Զէյթունի բարբառով անէծք և օրհնութիւնք, երդմունք, առակք . . . և փոքրիկ բառարան՝ արժանի է ամենայն հաւակրութեան. դոքա շատ թանկագին նիւթեր են լեզուագէտին՝ մեր բարբառների և գրական հին ու նոր լեզուների համեմատական ուսումնասիրութեան համար:

«Դ. Այս բոլորից հետևում է որ գիրքն՝ օգտակար և դովելի ձեռնարկութիւն է և մշակուած է բաւական հասուն կերպով. նորա թերութիւնները վերաբերում են ոչ թէ նիւթին և բովանդակութեան, այլ արտաքին կազմութեան, ուսոի և շատ չեն նուազեցնում նորա արժանաւորութիւնները:

«Իմ կարծիքով այս գիրքը՝ թէ իւր բացարձակ արժանաւորութեանց համար և թէ քաջալերելու համար նման և

աւելի կատարեալ ձեռնարկութիւններ՝ արժանի է տարեկան մրցանակի, կամ գոնէ նորա մէկ մասին, եթէ լինին ուրիշ արժանաւոր գործեր ևս։

«Ս. Պետերբուրգ, 8 յունիսի 1887։ ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑ»

Պատուարժան քննչաց վկայութիւնները ստանալէ յետոյ Յանձնաժողովս դումարելով ի նիստ ընդ նախագահութեամբ Ա.Ժէն. Ս. Պատրիարք Հօր, և ի նկատ առնլով երկասիրութեանց պատրաստութեան եղանակը, հեղինակաց ունեցած անձուկ միջոցներն և այլ պարագաներն և ի քաջալեր ալլոց՝ միաձայնութեամբ արժան դատեց որ Սահակ Մեսրոպեան մրցանակն այս տարի բաշխուի ընդ մէջ այս երկու հեղինակաց տրուելով, առաջնոյն՝ այն է Մանուէլ Էֆէնտի Միրախորեանի 35 ոսկի՝ վասն «Նկարագրական ուղևորութեան» և երկրորդին՝ Յակոբ Էֆէնտի Ալլահվէրտեանի 25 ոսկի՝ վասն «Ուլնիա» անուն երկասիրութեան։

Հարկ չէ ըսել թէ սոյն երկու գրեանք մրցման մատուցուելէ առաջ՝ արդէն տպագրութեամբ ի լոյս ընծայուած են՝ հասանութեամբ Հանրային կրթութեան պաշտօնատան։

Յանձնաժողովս իրրև թարգման փափաքանաց և ըղձից բարեյիշատակ և ազգասէր հանգուցելոյն Յովսեփայ Իզմիրեանց, յերմապին կը բաղձայ որ այս վարձատրութիւնք քաջալեր և հրապոյր մ'ըլլան հեղինակաց՝ առաջիկայ տարիներու մէջ հետզհետէ առաւել հմտալից և կարևոր աշխատութիւններ պատրաստելու և այս ոչ միայն մատրաքաղաքիս գրագիտաց և հեղինակաց մէջ, այլ և այն ամեն երկիրներ ուր կը գտնուին մշակք ազգային գրագիտութեան և պատմութեան և դիտուն հետազօտողք, որ կատարին պայմանաց մին ևս է որ ընդունուին ի գնահատութիւն բոլոր այն երկասիրութիւնները որք են Հայ լեզուաւ, աշխարհաբառ թէ գրաբառ, ձեռագիր կամ տպագիր, առանց նկատողութեան առնելու երկիրն ուր նոքա գրուած են։

Եւ արդարև ուսումնասիրելու նիւթք այնքան ճոխ են և բազմազան որ Յանձնաժողովոյս իրաւունք կու տան յուսալու թէ երբ մեր գրագէտք լուրջ նկատողութեան առնուն և քրքրեն նախնեաց թողած մատենագրական գանձերն, ի հայ կամ յօտար լեզու, և ի լոյս բերեն ինչ որ կը վերաբերի անցելոյն մէջ Հայոց ունեցած կենցաղին, բարուց և սովորութեանցն, անցից

և յիշատակարանաց, պատմական, տեղական, նկարագրական, լեզուաքննական և այլն, առաւել ևս օգտակար ծառայութիւն մը մատուցած կ'ըլլան հայ դպրութեան և արժանապէս կը պատասխանեն կտակարարին բուն նպատակին, որ միակ առարկայն է մեր ամենուս ըղձից և ջանադրութեանց։

Այնուհետև վ. սեմ. Նուրեան էֆէնտի բացատրելով Յանձնաժողովոյ կազմութիւնը դուէց անոր աշխատութիւնն, և Ս. Պատրիարքն օրհնեց Իզմիրեանց Յովսէփի յիշատակը։

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ*

ԴԱՍ Բ

Դաստիարակութեան սահման. — Երբեմն դաստիարակել կ'նշանակէր սնուցանել. այսօր բնդարձակագոյն իմաստ մ'ունի այդ բառն. ինքնին դաստիարակութիւն կ'նշանակէ այն ամէն ջլջոցները զոր կ'ընծայենք մարդկէ որպէս զի յաջողութեամբ կարենայ ճնոյն նպատակները հասնիլ։

Դաստիարակութիւնն ունի բազմաթիւ սահմաններ որոց գլխաւորներն են.

«Դաստիարակութիւնը նպատակ ունի կարելի եղածին չափ չինել մարդս այնպէս որ երջանկութեան գործի մը լինի ինքն իր անձին և իր նմանեներուն համար» (Ժ. Միւ†)։

«Դաստիարակութիւնն իր մէջ կ'ամփոփէ ինչ որ կ'ընենք և ինչ որ ուրիշները կ'ընեն, որպէս զի մեզ բնութեան կատարեալութեան մօտեցընեն» (Ս. Միւ§)։

*Տե'ս երես 227, 266։

†Ս. Միլլ հայրն, որ իր որդւոյն քարոզած դաստիարակութեան դրութեան ճշմարիտ հնարիչն է։

§ Անգլիացի հռչակաւոր տնտեսագէտ և իմաստասէր. ծնաւ 1806ին ի

«Զարգացընել անհատ մ'այն ամեն կատարելութեան մէջ որու ընդունակ է, ահա այս է դաստիարակութեան պաշտօնը» (ՔԱՆԴ*)։

«Դաստիարակութիւնը նպատակ ունի տալ աշակերտին մի-ջոցներ որպէս զի կարող լինի հասնիլ կատարելութեան որու ընդունակ ալիտի լինի օր մը» (ՏԻԿԻՆ Ն· ՏԸ ՍՕՍԻՒՐ§)։

«Դաստիարակութեան նպատակն է պատրաստել մարդս ապրելու կատարեալ կենօք» (Հ· ՍՊԵՆՍԷՐ)։

Դիտելի է որ այս սահմաններն իրարու հակառակ չեն, այլ մին միւսով կ'լրանայ· վասն զի մէն մի սահման աւելի կամ նուազ կ'պնդէ այս ընդհանուր գաղափարին վրայ թէ՝ մարդ-ունի չինքն զարգացման յատուկ սերմեր, և պարտի ըստ կարի մօտենալ կատարելութեան իդէալի մը։

Թոսթքարհօրնեան ֆորձն ա քհանմաւնէ· — Ուրեմն դաստի-արակութեան ամեն դրութեանց նպատակն է՝ կարելի եղածին չափ մարդս կատարեալ ընել։

Սակայն այս նպատակին հասնելու համար մանկավարժներն անհամամիտ կ'գտնուին գործածելի միջոցներու մասին, այս-ինքն այն սկզբանց՝ որոց հաւեմատ պարտ է զարգացընել մարդկային կարողութիւնները, նոյնպէս թէ՝ իրրև կարևոր, մէն մի կարողութեան տրուելիք կարգն, և այլն։

Որքան մեծ լինի դաստիարակութեան ղօրութիւնը, պէտք չէ կարծել թէ այն կարող է էապէս վերաչինել անհատ մը։ Դաստիարակութիւնն ոչ ինչ նոր չատեղծեր, չվերաչիներ մի-ահամառա երկրորդ բնութիւն մը, բայց կ'ուղղէ, կ'կանոնաւո-րէ, կ'ուսցընէ աւեն բանէ օգուտ քաղել, ի հարկին՝ կ'զսպէ, կ'զարգացընէ այն կարողութիւններն որով օժտուած է մանուս-կը։ Դաստիարակութեան գործը յետին ծայր արդիւնաբեր է և վերաչինիչ, և կարելի է ըսել որ ընկերութեան մը կատարե-լագործութիւնը դաստիարակներու ձեռքն է։

Դաստիարակութիւնը տեսլական ինչ կէտ նպատակի որ ու-նենայ, ինչ սահման որ ստանայ, անտարակոյս դժուարին և

Լոնտոն, մեռաւ 1873ին· ունի բազմաթիւ գործեր· Աղտոնութեան· Եւսպո-նեան Յառաջդիմութեան· Ջրամաքանութեան· Տնտեսագիտութեան· և այլն։

*Գերմանացի անուանի իմաստասէր, բանաքննական իմաստասիրութեան հնդկնակ (1724—1804)։

§Գրած է Դաստիարակութեան· Ոստոս ընտ (1765—1841)։

կնճռոտ գործ մ'է. ուստի օգտակար է դաստիարակութեան ուսումն դիւրացընելու համար, այլ և այլ մասերու բաժնել.

Ա.մենէ պարզ բաժանումն ալիտի լինէր այս. ա) Մարմնոյ դաստիարակութիւն, բ) Հոգւոյ դաստիարակութիւն:

Կարելի է նաև հիմ բռնելով այս սկզբունքը թէ՝ գործունէութիւնը մարդ էակին նոյն իսկ բնութիւնն է, ուսումնասիրել այդ գործունէութեան զանազան ցոյցերը — մարմնային գործառնութիւն, մարմնոյ բնազդումներն ու սովորոյթը. հոգւոյն գործառնութիւն, որու նշաններն են հոգւոյ կարողութիւնները (յիշողութիւն, երևակայութիւն, գաղափարներու զուգորդութիւն, դատումն, բանավարումն, և այլն):

Վերջապէս՝ մարդս երեք տարբեր տեսակէտէ դատելով, այս է՝ իր ֆիզիքական, մտային և զգայական բնութեան համեմատ, կարելի է դաստիարակութեան գործն երեք մասի բաժնել.

ա) ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

բ) ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

գ) ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Սակայն պէտք չէ այս բաժանման տարապայման կարևորութիւն տալ: Նոյն ամբողջին երեք մասերը կամ մի և նոյն բանին երեք երևոյթները կ'ներկայէ այս բաժանումն:

Դաստիարակութիւնն արուեստ մ'է և գիտութիւն մը. — Դաստիարակութիւնը թէ արուեստ մ'է և թէ գիտութիւն: Արուեստ մ'է, վասն զի ամեն դաստիարակական դրութեան կիրառութեան մէջ՝ մեծ դեր ունին կատարել դաստիարակին յայտնաբանութիւնը, ճաշակն և նրբամտութիւնը, բայց կան նաև հանրային, ճշգրիտ, ստոյգ կանոններ որոց վրայ ալիտի հիմնուի դաստիարակութեան բոլոր չէնքը: Հետևապէս արուեստ մ'է այս ղեր հարկ է գիտապէս ուսանիլ, այսինքն պէտք է ի գործ ածել այդ արուեստին յարակից գիտութեանց տուած սկզբունքն: Ինչպէս որ տարրարանութեան օրէնքը կ'գործածուին հողագործութեան մէջ, նոյնպէս հարկ է դաստիարակութեան համար գործածել Հոգեբանութեան, Տրամաբանութեան և Բարոյագիտեան հայթայթած ծանօթութիւնները, որ ամեն լաւ մանկավարժութեան հիմունքն են:

Մերթ կ'առարկուի որ մի կողմէ մայրական բնազդն և միւս կողմէ փորձառութիւնը կարող են մանկավարժական ուսմանց

թերին լրացընել: Արդարև՝ կան մասնաւոր պարագաներ ուր մայր մը կամ փորձառու դաստիարակուհի մը չատ լաւ կ'կրթեն իրենց նանամոց յանձնուած մանկտին, բայց այս բացառիկ պարագաներն ինքնին ապացոյցներ չեն դիտութեան անհրաժեշտ կարևորութեան դէմ:

Նկատելի պայմանք դաստիարակութեան մէջ. — Դաստիարակի իր առաջադրած նպատակին հասնելու համար պարտի նախ քննել և լրջօրէն ի նկատի առնուլ մի քանի պայմաններ.

ա) Այն պայմաններն որ իշխանութեան սկզբունքին կ'վերաբերին: Դաստիարակը պարտի ունենալ իր իշխանութիւնն ի գործ դնելու հնարաւորութիւնն իր հասակին, դիտութեան և փորձառութեան դերազանցութեամբն աշակերտին կարողութեան և սահիքին վրայ:

Պարտի ունենալ հաստատ կամք սոյն իշխանութիւնն ի գործ դնելու և անձանձիր աշխատութեամբ աշխատելու իր աշակերտաց բարոյական օգտին համար: Բարեխորհուրդ կամայ ակը և լուսամիտ դաստիարակ մը պիտի յաջողի նուրբ դաստողութեամբ, անուշութեամբ և խոհականութեամբ ի կատար հասնել այն միջոցները զոր հնազանդութիւն և յարգ ապահովելու փափաքը կրնայ իրեն ներշնչել:

բ) Այն պայմաններն որ աղատութեան խնդրոյն կ'պատկանին: Պէտք չէ որ աշակերտն իրրև կրաւորական գործի մը նկատուի դաստիարակութեան գործին մէջ: Անշուշտ հարկ է որ մանուկը հնազանդութեան վարժի, որ իր ազատական միտումները զսպէ, որ լաւ սովորութիւններ ստանայ, բայց չէ թէ անխորհուրդ կամաց լծի տակ ընկճելով անդադար անոր քնածին յատկութիւնները: Յարդել իր անձնականութիւնը, վարժեցընել ինքնին զսպելու իր անկանոնութիւններն և ինքնայորդոր հնազանդիլ, ահա այս է լաւ դաստիարակութեան պաշտօնը:

գ) Այն պայմաններն որ կ'վերաբերին միջավայրին: Առանք կը փոխուին ըստ տեղւոյն, այս է ընտանեկան և դպրոցական դաստիարակութեան համեմատ:

Դաստիարակութիւնը հասարակաց, հասուտական, մասնաւոր և անհատական. — Դաստիարակութիւնը հետևապէս կրնայ տրուիլ երկու ձևով, այս է՝ հասուտական կամ անհատական: Հասարականն այն է որով դաստիարակութիւնը միահամուռ կ'տրուի բազմութիւն մանկանց. անհատականն այն է որով լոկ մէկ կամ մի քանի մանկանց կ'տրուի հօրենական տան մէջ:

Թէ մին և թէ միւսն ունին իրենց օգուտներն ու անպատեհութիւնները : Առ հասարակ անհատական դաստիարակութիւնը նախամեծար կ'համարուի այն տղոց համար որ դեռ ևս կարօտ են ընտանեկան խնամոց : Իրաւ է որ անհատական դաստիարակութիւնն ունի այս անպատեհութիւնն որ քմահաճ և անխորհուրդ ընթացից տեղի կ'տայ ստէպ և զուրկ կ'մնայ այն դրդիռէն որ հաւաքական դաստիարակութեան մէջ կը գտնուի :

Հաւաքական դաստիարակութիւնը կ'վարժեցընէ աչակերտը կանոնաւորութեան , ճշդապահութեան . այլազան բնաւորութեանց հետ հաղորդակցութեան մէջ կ'դնէ զանի , և կ'սորվեցընէ անոր քաղցրութեամբ և բարեսրտութեամբ վարուիլ արտաքին յարաբերութեանց մէջ : Այժն ինչ կանխաւ նախատեսած և կանոնաւորուած լինելով՝ ծրագրի մը միջոցաւ որ հաւասարապէս կ'գործածուի ամենուն համար , մանկային զօրութեան զսպանակն անդադար չձկտիր և չթուլնար , ինչպէս կ'պատահի երբ մանուկը քմածին հաճոյից համեմատ կ'դաստիարակուի , և կամաց դաստիարակութիւնը լաւագոյն ուղղութիւն մը կ'ստանայ :

Հասարակային դաստիարակութիւնն ազգային կամ պետական հիմնարկութեանց մէջ կ'տրուի . իսկ մասնաւոր կամ ազատ դաստիարակութիւնը կ'տրուի անխակ վարժարանաց մէջ՝ պետութեան հսկողութեան ներքև :

Լա- պատիրակ-ընեան մը հանգամանքն . — Այս նկատումներէ կարելի է եղրակացընել որ լաւ դաստիարակութիւն մը հետևեալ հանդամանքը պարտի ներկայել .

Պէտք է որ լինի ,

ա) Բնական , ջհամաձա և յատաջդիմական . այսինքն պէտք է որ հետևի բնութեան ընթացքին՝ առանց փութացընելու և առանց յամելու . մանկան բնութիւնն ի նկատի առնուլ , զարգացընել միասին և նոյն համեմատութեամբ մտային կարողութիւնները .

բ) Աղատական , այսինքն պարտի յարգել մանկան անձն , որ ինքնին նպատակ մ'է , կ'ըսէ Քանդ , և երբէք իբրև միջոց չգործածել . կրթութեան նկատմամբ՝ պէտք է աւանդել մանկան կարելի եղածին չափ ընդհանուր ծանօթութիւններ , առանց ահմանափակելու մասնագիտութեան մէջ .

գ) Բարոյական , այսինքն պարտի ունենալ երկու ձեռք՝ ոչ

միայն կրթութիւնը բարոյականութեան ձեռնտու ընել, այլ նաև մանկան կամքը հաստատապէս ուղղել դէպ ի բարին, զոր ճանչնալու և սիրելու վարժած պիտի լինի։

Դաստիարակութիւնը կատարելագործութեան խնդիր մը լինելով, կ'տևէ բոլոր կենաց մէջ։ Վասն զի՝ երբ մանուկ ենք՝ այլոց գիտութիւնն ու փորձառութիւնը կ'առաջնորդեն մեզ, երբ արբուն հասակի մէջ՝ մեր յատուկ փորձառութիւնը շատ բաներ կ'ուսցընէ մեզ և կ'գրգռէ աւելի լաւ լինելու։ Այն միջոցին որ մենք մեր անձն դաստիարակութեամբ կ'բարւոքենք, մեր նմանեաց վրայ ևս կ'ներգործենք և մինչև իսկ մեր յաջորդներու վրայ, քանի որ, հոգեբանական ժառանգութեան օրինաց համեմատ, ընդունուած է թէ, աստիճան մը, անհատի մը յատուկ ձիտմունք և սովորութիւններն իր սերունդին կ'աւանդուին։

Վ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԶՄԻՒՌՆԻՈՑ

Վիճակիս Գաւառական ժողովը՝ ընդ նախագահութեամբ Սրբազան Առաջնորդի և առենապետութեամբ Մեծ. Ազգային կարապետ էֆէնտիի ցարդ երեք նիստ ըրաւ և զանազան կարևոր գործեր աւնօրինեց։

Ազդէն ծանուցինք որ ապրիլ ամսուն 24ին իր առաջին նիստն ըրաւ ի ներկայութեան 12 երեսփոխանաց։ Ըստ օրինի ընտրուած քաղաքիս 5 եկեղեցական, 20 աշխարհական և թեմական 2 երեսփոխանաց ընտրութեան տեղեկագիրներն ի նկատի առաւ և ըստ 82րդ յօդուածի Սահմանադրութեան եղած ընտրութիւնները վաւերեցին ևտև՝ իր դիւանը կազմեց, թեմական միւս 8 երեսփոխանաց ընտրութիւնը փութացընելու գործն առ որ անկ է յանձնարարելով։

Ներկայ ամսոյս 14ին ի ներկայութեան 15 երեսփոխանաց իր երկրորդ նիստն ըրաւ Գաւառական ժողովը, վաւերացուց հինգ նորընտիր թեմական երեսփոխանաց

ընտրութիւնն և ընտրեց հրօնական ժողովին, որու անդամներն են.

Արժ. Տ. Յակոբ Պալապանեան Արժ. Տ. Պետրոս Մամիկոնեան
» » Աւետիս Ոսկերիչեան » » Աբրահամ Մանիկեան.
» » Յովհաննէս Մինասեան

և ապա օրակարգը չլինելով յաջորդ նիստը նոյն ամսուն 19ին կազմել որոշեց:

Սոյն տնօրէնութեան համաձայն՝ գաւառական ժողովին, ուր ներկայ էին 17 երեսփոխանք, իր երրորդ նիստը կազմելով, նախ՝ ըստ խնդրոյ կեդրոնական վարչութեան, կեդրոնական ընդհանուր ժողովոյ համար իր կողմէ սահմանելիք երեսփոխանի ընտրութեան ձեռնարկեց և այս պաշտօնին համար ընտրեց Պետ. Պարիկ էֆէնտի Նիւլպէնկեան, ապա որոշեց յղել յԱզգային Պատրիարքարան գաւառական ժողովոյ ընտրութեան և դիւանի կազմութեան յայտագիրը, պաշտօնական յարաբերութեանց կանոնաւորութեան համար, նոյն յայտագրին կցելով նաև կեդրոնական երեսփոխանի ընտրութեան տեղեկագիրը:

Արդէն քաղաքական ժողովին տեսուչ խորհրդներով իր երկամեայ շրջանն աւարտած և իր հրաժարագրին հետ համարատուութեան ընդարձակ տեղեկագիրը մատուցած էր ժողովին: Բայց ըստ որում անհրաժեշտ էին այդ տեղեկագիրները, ժողովն արժան դատեց նախ ապատրութեան յանձնել և մի մի օրինակ բաշխել տալ բոլոր երեսփոխանաց և ապա ղանոնք յատուկ նստի մը մէջ նկատողութեան առնուլ: Եւ որպէս զի ազգային գործերը բարձի թողի չմնան՝ նոր քաղաքական ժողովոյ ընտրութեան ձեռնարկեց:

Սոյն ժողովին անդամ ընտրուեցան.

Տեարք	Տեարք
Յակոբեան Պալըճեան	Ճանիկ Էլմասեան
Սահակ Վարպետեան	Մկրտիչ Պաղատալեան (հրաժարեալ)
Կիւլպէնկ Կիւրինեան	Պետրոս Պաղըրճեան »
Սահակ Փանոսեան	

Նոյն նստին մէջ վերստին նկատողութեան առաւ ժողովը երեսփոխանի մը կողմէ եղած առաջարկն 17 կրպակներու չինութեան մասին, և այդ կարևոր խնդիրը յանձնեց Ազգային վարչութեան որ քննէ և իր տեղեկագիրը ներկայացընէ իրեն։

ժողովին մէջ կարդացուեցան Մեծ. Ամենայն էֆէնտի կոստանդեանի և Մեծ. կարապետ էֆէնտի Ա. Սպարտալեանի պարզ հրաժարականները և ընդունուեցան։

* * *

Կ'իմանանք որ քաղաքական ժողովը իր առաջին նիստն ընելով՝ դիւանը կազմած է, որու անդամներն են.

Մեծապատիւ Յակոբեան Պալըգճեան, Ատենապետ
» Ստեփան Վարպետեան, Ատենադպիր։

Նոյնպէս ընտրեց վարչային մի քանի ճիւղերն։
Ցնտեսական խորհրդոյ նորընտիր անդամներն են.

Տեարք Յովհաննէս Զազըրեան Տեարք Մխսաք Մօրուքեան
Գէորգ Կ. Ակատեան Յակոբ Տիլսիզեան։
Պետրոս Կ. Տիլպէրեան

Ուսումնական խորհրդոյ նորընտիր անդամներն են.

Տեարք Լ. Ղազիկեան Պալեօզեան, Կ. Յակոբեան, Մեսրոպ Սիմոնեան։

Ահա այսպէս սահմանադրապէս կազմուեցան վիճակին Ազգային ժողովները, որ անտարակոյս իրենց դործունէութեամբ և ազգային գործոց մէջ ունեցած ձեռնհասութեամբ նոր մղում մը պիտի տան ամեն ազգօգուտ ձեռնարկներու և նախանձելի օրինակ պիտի հանդիսանան ուրիշ գաւառներու։ Կեդրոնական վարչութիւնը կրնայ դոհ լինիլ որ՝ եթէ կայ գաւառ մ'որ նուաղ նեղութիւն և ձանձրոյթ կ'պատճառէ իրեն թէ վարչային և թէ այլ գործոց անօրէնութեան մասին, այս

է՝ Զմիւռնիա. իսկ լրջամիտ Զմիւռնացիք ևս կրնան պարծիլ որ Սահմանադրութեան հաստատութենէ ի վեր, մանաւանդ մեր Սրբազան Ադաչնորդ հօր հովուութենէ առաջ՝ չէ եղած ժամանակ մ՚որ ազգային և վարչային խնդիրներ և գործեր այսքան սահմանադրական և արդարասիրական ոգւով կարգադրուած լինին, չէ եղած ժամանակ որ եկմետական, տնտեսական և կրթական գործոց մէջ այսքան կանոնաւորութիւն և օրինապահութիւն տեսնուած և ազգային հիմնարկութիւններն այսքան զարգացած լինին։ Եւ ասոնք լոկ խօսքեր չեն. չափելի, հոյակապ և անժխտելի իրողութիւններ կ՚հաստատեն մեր ըսածը. Գաւառական, Քաղաքական ժողովոյ և Տեսուչ խորհրդոյ տպեալ տեղեկագիրներն ակնարկ ցոյց կ՚տան, որ համաբաւութեան և պատասխանատուութեան վիրկաւէտ սկզբունքը բաւական ժամանակէ ի վեր արմատ ձգելով մեր մէջ զգալի օգուտներ յառաջ բերած է։

ԼՐԱԳԱՂ

Զէյթունի եւ Իսկիւտարի հրկիզութիւնք մեծագոյն ազէտներն եղան մանաւորապէս Հայ ժողովրդեան համար։ Յուլիս ամսոյ 26ին, Կիւրակի օր, Զէյթուն հայաբնակ գիւղաքաղաքն իր 1000 տուներով գրեթէ ամբողջապէս հրոյ ճարակ եղած և աւերակոց կոյտի մը վերածուած է. տարաբաղդ հրկիզեալք, յետին թշուառութեան մատնուած, ապաստանած են այգեստաններու մէջ. անմիջական օգնութիւնք հասած են Մարաշէն և Հալէպէն. Վեհափառ Սուլթանն ևս հրամայած է պետք եղած միջոցներն ձեռք առնուլ Զէյթունի հրկիզելոց օգնելու և անոնց տառապանքը մեղմացընելու համար. իսկ ազգային շրջանակի մէջ ցարդ ո՛և է շարժուձեւ չտեսնուիր թշուառ հրկիզելոց նպաստ և օգնութիւն հասցընելու համար, թէև մարդասիրական և ազգային անհրաժեշտ պարտաւորութիւն մ՚է շուտ ընդ փոյթ նպաստ հասցընել այդ տառապելոց, ամեն հայաբնակ քաղաք հանգանակութիւն բանալով և հաւաքուած դրամներն ապահովապես գործածելով Զէյթունի թշուառ ժողովրդեան տուն, ուտեստ և հանդերձեղէն մատակարարելու համար։

Զ՛յիւնի հրդեհէն ութ օր ետք, ամսոյս 2ին, կիրակի օր, իւսկիւ-տարի ահաւոր հրդեհն մեխիր դարձուցած է 1000–1200ի չափ տուն, ի մէջ այլոց Հայոց Ս. կարապետ եկեղեցին և ձեմարանն, հանդերձ վանքին Աւագին կոչուած հայարնակ թաղով. հրկիզելոց մեծագոյն մասն, կայսերական հրամանաւ, փոխադրուած են Սելիմիյէի զօրանոցն և Պէյլերպէյի պալատն, ուր առաւօրէն կ՛վազելէին վեհափառ Յուլիանի հայրախնամ հոգածութիւնն. նոյնպէս Նորին կայսերական վեհափառութեան հրամանաւ առաջ ուտեստ և բժշկական խնամք կ՛մատուցուին թշուառ պատսպարելոց, ընդ նմին և 3000 ոսկւոյ դրամական նպաստ մը: Հրդեհին պատճառած նիւթական վնասն կ՛հաշուի իբր 300 հազար ոսկի: Սոյն կրկնակի ազէտից ի մէջ մնանաւորապէս Հայ ժողովրդեան ջերմագին շնորհակալեաց և անհուն երախտագիտութեան արժանի է մեր Օգոստափառ վեհապետն իր հայրախնամ գթութեան, անսահման բարերարութեան և առաջադութ շնորհոց համար:

Ռափայէլ Պատկանեան Ռուսահայ մեծագունց բանաստեղծն ամսոյս 9ին կոստանդնուպոլիս հասեր և սիրալիր ընդունելութիւն գտեր է ամէն դասակարգի ազգայիններէ. այցելեր է ազգային կրթական և այլ հաստատութիւններն և կոստանդնուպոլսոյ նշանաւոր շէնքերն: ի կ. Պոլիս հնդհատանօրեայ բնակութենէ յետոյ մեկներ է իր հայրենիքն ի Նախիջևան:

կարնոյ առաջնորդական ընտրկի որոշուեր են կոստանդնուպոլսոյ Խառն ժողովոյ կողմէն՝ Գերապատիւք Խորէն եպիսկոպոս Նար-Պէյ, Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան և Արժանապատիւ Ներսէս վարդապետ Արսլանեան: Առաջինն խնդրեր է չընդել իր անունն կարնոյ առաջնորդական ընտրելեաց ցանկէն, յայտնելով թէ կ՛բանակցի Ռուսահայոց Հայոց հետ՝ որպէս զի անոնց առաջնորդութիւնը վարէ եթէ հանձայնին պայմանաց վրայ: Երկրորդն անձնական տկարութեան պատճառաւ մերժեր է նոյն վիճակի առաջնորդութիւնը: Է՛ր Խրլոֆոր Մամբրէ եպիսկոպոս մնացեր է:

վեհափառ Յակոբեան գահակալութեան մետասաներորդ տարեդարձը կատարուեցաւ քաղաքիս մէջ աւելի շքեղութեամբ քան նախորդ տարիներն. լուսաւորութիւնք և հրախաղութիւնք տեղի ունեցան. բոլոր պաշտօնական և մասնաւորաց շէնքերն լուսաւորեալ էին գոյնզգոյն կանթեղներով. ամենուրեք կ՛ծածանէր Օսմանեան դրօշն. ամենէն աւելի շարժուած և ոգևորութիւն կ՛տիրէին քարափին վրայ որ գոգցես երբեմնագ լուսոյ դիւթական ովկիանոս մ՛էր դարձած, և լոյսերու այս անհուն հեղեղին վրայ կ՛տիրապետէր ելեկտրականութեան ակնախտիղ լոյսն որ՝ իբր ի ցերեկի՝ ի տես կ՛բերէր անհուն ամբոխ մը երկաթ բազմութեան որոց սրտառանգ և զուարթագին ձայներն խառնուելով նուագարանաց հեշտալուր և եռանդագին շեշտերուն՝ գոգցես կ՛սլանային մինչև վ՛ոսբոր և իւր օրաբաժին բարեմաղթութիւններն ու շնորհաւորութիւններն կ՛տանէին յուսին իւր Օգոստափառ վեհապետին: Առաւօտեն սկսեալ վեհ. կուսակալին շնորհաւորութեան գացին հետզհետէ բոլոր ազգաց հիւպատոսք կամ թարգմանք, կրօնական գլուխք, կառավարական բարձրաստիճան պաշտօնատարք և այլ երևելի անձինք: Շնորհաւորութեան գացողներու մէջ մնանաւոր յիշատակութեան արժանի է մեր Ամենապատիւ Սրբազան Առաջնորդն որ խումբ մը քահանայից և նշանաւոր ազգայնոց ընկերակցութեամբ, նոյնպէս

տաններկու դպրոցական ձայնաւոր աշակերտաց՝ կառքով գնաց կեսաւա-
րական պալատն. սոյն տաններկու աշակերտաց համար Ս. Աստղնորդն օր
առաջ՝ Պատ. Հոգատար ընկերութեան ծախիւք՝ շինել տուած էր միօրի-
նակ զգեստներ՝ կ. Պօլսոյ Մէքթէպի թըպիէի զգեստուց ձեռվ. աշակերտք
սոյն զգեստներն հագած և փառաւոր ծաղկապսակ մ'ի ձեռին՝ ներկայա-
ցան Բարձր. կուսակալին, երգեցին հոյերէն և տաճկերէն պատշաճ և գե-
ղեցիկ երգեր, նոյնպէս աշակերտաց մին կարդաց տաճկերէն լեզուաւ խիստ
գեղեցիկ ուղերձ մը ի շնորհաւորութիւն գահակալութեան Օգոստափառ
Սուլթանին, յայտնելով երախտագիտական ջերմ զգացումներն Հայ ազ-
գին: Վ. սեմ: կուսակալն խիստ գոհ եղաւ և իր շնորհակալիքն յայտնեց:

Իգմիրեան Մատթէոս արքեպս Եգիպտոսի ազգային գործոց մա-
սին երկրորդ տեղեկագիր մը մատուցանելով Ազգային Կեդրոնական վար-
չութեան, կը յայտնէ թէ Եգիպտոսի ազգային գաղթականներէն բնիկ վա-
նեցի հանգուցեալ Գալստեան Կարապետ աղայի կտակի խնդիրն կարգա-
դրուեր է մանաւորապէս աշխատութեամբ Վ. սեմ: Թագաւոր փաշայի: Այս
կարգադրութեամբ հանգուցեալ կտակարարի կամաց համեմատ, թէև իւր
մահուանէն քաններկու տարի եաք, ազգին կտակեալ 800 արտաւար տա-
րածութեամբ երկը ագարակներու և երկու տանց հետքերն ազգին անուան
դարձած են:

Յակոբ էֆէնդի Աշըգեան եւ Յոսէփ էֆէնդի Կիւմիւշկեղեան,
երկու մեծահարուստ վաճառականք, ծանօթք իրենց առ ազգն մատուցած
ծառայութեամբք, ողորմասիրութեամբ և առատաձեռն բարերարութեամբ,
ամսոյս մէջ վախճաներ են. առաջնոյն մարմինն փոխադրուեր է Հերուսա-
ղէմ և իւր դերդաստանի դամբարանին մէջ ամփոփուեր է: Յիշատակն
արդարոց օրհնութեամբ եղիցի:

Օտեան Գրիգոր էֆէնդի, որ մի քանի տարիէ ի վեր ի Բարիզ հաս-
տատած էր իր բնակութիւնն, ամսոյս 4ին վախճաներ է իր Օգէօյլի ընա-
կարանին մէջ: Յուղարկաւորութեան տխուր հանդէսն կատարուեր է ամ
սոյս 7ին երկուշաբթի օր, ի ներկայութեան բարեզարնակ քառատնի չափ
ազգայնոց, ախանաւոր Ֆրանսացւոց և այլ օտարազգեաց. Հոգևոր պաշ-
տօնը կատարեր է Մարսիլիոյ Հայ քահանան Տ. Սահակ Իւթիւճեան. բազ-
մաթիւ պահներ և փունջեր գրուեր են իւր դագաղին և շիրմին վրայ, և
մարմինն ամփոփուեր է Բէռ Լաշէզի գերեզմանատան մէջ: Օտեան Գրիգոր
էֆէնդի էր մեծ հայրենասէր, անշահախնդիր և անկեղծ ազգասէր, բարե-
պաշտ հաստատեալ, հանճարեղ քաղաքագէտ և վարչագէտ, տաղան-
դաւոր գրագէտ, ազգային նշանաւոր գործիչ. հետևապէս այսպիսի հա-
ղուագիւտ ձիրքերով օժտեալ բարձր անձնաւորութեան մը կորուստն խոր
ազդ և տխրութեան քօղ մը կ'ձգէ բովանդակ Հայութեան սրտին վրայ, և
Օտեան անունն անմահ կ'ինայ ներկայ և ապագայ Հայ սերնդի պատերուն
մէջ:

Կատաղիանպատօղայ ազգային հատատութիւնք. Սոյն վերնագրով
խմբագրական յօդուած մը հրատարակած է Աբեթ. այդ յօդուածի մէջ
յիշելէ յետոյ Ֆրանսայի բժշկական Ակադեմիոյ անդամ Տօքտ. Դրեչըյի ը-
նելիք ուսումնասիրութիւնն ի կ. Պօլիս, դառնապէս կ'գոհանայ որ՝ կ. Պօլսոյ
Հայ հասարակութիւնն չունի ո՛ և է հաստատութիւն մը զոր կարենայ ոյժ

տալ գիտնական օտարազգի մը, ո՛չ մտաւնադարան, ոչ թանգարան, ոչ գիտնական կամ մանագիտական բարձրագոյն վարժարան, ոչ բարեկարգ և նոր հիւանդանոց, ոչ պատրիարքարան և ոչ իսկ գոհացուցիչ նախկրթարաններ։ Զարմա՞նք։ Աբնե՛ք՝ որ միշտ վարդապոյն կ'ներկայեր Պօլսոյ ազգային հաստատութիւններն և ներքոյներ կ'կարդար վարչային ազգային գործերու մասին, ի՞նչպես յանկարծ բերանը փոխելով՝ ազգային և ոչ մի հաստատութիւն կ'գտնէ ի կ. Պոլիս՝ որ օտար գիտնականի մ'ուշադրութեան արժանի նկատուի։

Ն.

Գ. Ս. ՕՏԵԱՆ

Բարիզէն, այս ամիս, հեռագիրը գուժեց Հայութեան որ մեծ Հայն այլ ևս չէ, օտարութեան մէջ՝ իր հոգին աւանդեր է։

Ա՛յս գոյժն անհնարինս տագնապեց և վշտացուց ամեն ճշմարիտ Հայոց սիրտեր և ընդհանրապէս տրտմութեան և սգոյ քօղ մը տարածեց Ազգին վրայ։ Եւ ինչո՞ւ ամեն Հայ՝ մեծատուն և աղքատ, ծեր ու պատանի, դիտուն ու տգէտ կ'ողբան այս անդարմանելի և տարաժամ կորուստը։ Միթէ մահն ու կեանքն գոյութեան տարբեր երևոյթները չե՞ն, միթէ հողածինն սահմանուած չէ՞ ի հող դառնալ վաղ կամ անագան և բնութեան այդ հարկը վճարել, միթէ ամեն օր, ամեն ժամ ու վայրկեան հեռուն ու մեր շուրջը կենսաղուրկ չե՞ն կործանիր ամեն կարգի և հասակի անհատներ այն փոսն որ յաւիտենականութեան արահետն է։

Ի՞նչ նորանշան և արտասովոր հանգամանք ունի Օտեանի հանգիստն քան ուրիշ Հայու մը մահն։ Է՛հ, կան ամեն բարեկիրթ ազգաց մէջ մարդիկ որոց կեանքն այնպէս տարբացած է ազգային կենսոյ այլ և այլ չքեղ և և անշուք արտայայտութեանց հետ, որ երբ այդ կեանքը մարի, երբ այդ սիրտը բաղխելէ դադրի, կարծես թէ

ազգային կենաց մի ընտիր մասն իր հետը կ'տանի, ազգային մարմնոյն արեան շրջանը պահ մը կ'դադրի, վհատութեան և յուսահատութեան զգացմամբ համակուելով, նման այն գորովալիր հօր որ իր հոգւոյն ամենէ կենսատու մասունքը կ'թաղէ վաղամեռիկ սիրասուն որդւոյն գերեզմանին մէջ։

Այս տեսակ անձնատուրութեանց կարգէն էր և Օտեան Հայութեան սահմանափակ շրջանին մէջ և բարձրագոյն ճակատագրի ի բնուստ սահմանուած, եթէ ընդարձակագոյն միջավայր ունենար իրեն ասպարէզ։

Բայց, աւաղ, որ Օտեան իր առջև բացուած ասպարիզին ծայրն անգամ չհասած ընկաւ վհ անագորոյն և դառն հիւանդութեան և յեղյեղուկ բաղդի հարուածներուն ներքև։

Եւ այսօր Աղգը կ'լայ իր գերազնիւ և սիրական զաւակը յանձին Օտեանի, անուն հոյակապ, այլ երբև բառ ընտանի կ'չրջի գոյանօք ամեն ազգայուն չրթանց վրայ, կ'շարժէ յարտասուս ամեն սիրտ և իր հետ կ'բերէ գրեթէ քառորդ դարու ազգային յառաջդիմութեան մղումներու և ազգային կենաց ուրախութեանց և դառնութեանց յիշատակները։

Եւ ինչ էր Օտեանի ժողովրդականութեան պատճառն, ինչ զօրութեամբ և հմայութեամբ յաջողած էր տիրել ժողովրդեան հոգւոյն մէջ և չատ տարիներ անոր ճակատագիրը վարել։ Այդ զօրութեան գաղտնիքն ոչ հարստութեան, ոչ բոլորովին բարձր պաշտօնական դրից, ոչ գրականական արտասովոր յատկութեանց և ոչ անանման հմտութեան և գիտութեան մէջ էր, այլ իր գերընտիր բնաւորութեան, այլ իր գեղեցիկ խմացականութեան, այլ իր հայրենասիրական և մարդասիրական ոգւոյն, այլ իր բանիմաստ և համոզակեր պերճախօսութեան, այլ իրաց և մարդկան վրայ իր խորաշնին գիտակցութեան և ազգայ ղարգացման և աչխարհավարական օրինաց հմտութեան մէջ, այլ մանաւանդ ճշմարտութեան, արդարութեան և բանաւոր աղատութեան հա-

մար ունեցած անյողդողդ հաւատքին մէջ։ Ու այս հաւատով կ'զօրանար Օտեան, իր ազգային և պաշտօնական կենաց ներշնչումեանց աղբիւրն անոր մէջ գտնելով նոր եռանդ ու խանդ կ'ստանար, կ'յուզուէր և կ'յուզէր հոգիներն և կատարեալ գոյն աչխարհ մը կ'սաւառնէր իր հետը առնելով իր իմացականութեան և վեհ հոգւոյն վրայ ղմայլող, մարդկային գեղեցիկ կրքէ և անձուկ նկատումներէ ազատ՝ համակոհ մտերիմներն՝ պատրաստ՝ իրենց մեծահոգի առաջնորդին հետ, մաքառելու հայրենի ընդհանուր շահուց և իրաւանց ի միաս լարուած ամեն դարաններու և դաւերու դէմ։

Ա.յս բարոյական և մտային հանգամանքն, ուղիղ և հաստատ կամաց, որոշ և արդար սկզբունքի ու խորին համոզմանց հետ միացած, իր անձին այնպիսի վեհութիւն, իր ձայնին այնպիսի հրապոյր, իր խօսքին այնպիսի ազդուութիւն և հեղինակութիւն կ'ընծայէին, որ ամենէ ըմբոստ միտքերը կ'գրաւէր, ամենէ վեհերոտ սիրտերը կ'կազդուրէր և ահ ու դող կ'ազդէր նենգաժէտ ու չարահնար սիրտերու, որ մերթ ընդ մերթ իր ճամբուն վրայ դարանամուտ կ'սպասէին։

Նախախնամական և հաղուագիւտ չնորհ մ'էր այս ընտիր հանգամանաց տէր անձնաւորութեան ներկայութիւնն իր իսկական չահուց անտեղեակ, կուսակցական պայքարներու ենթակայ և հին ու նոր դրութեանց մէջ տատանող ժողովրդեան մը համար։ Ա.յս նախախնամական պաշտօնը կատարելու սահմանուած էր Օտեան և կատարեց զայն այնպիսի կորովամիտ ճարտարութեամբ և լուսամիտ քաղաքականութեամբ, որ մինչև անգամ հին գլուխներու, դիւանագիտական նրբութեանց մէջ վարժ ու փորձառու ազգայնոց համակրութիւնն ու սքանչացումն գրաւեց։

Պարզ էր և որոշ Օտեանի նպատակն և որոշագոյն իր ընտրած յատակագիծն, այս է՝ տալ ժողովրդեան իր իսկական պետոյից և իրաւանց գիտակցութիւնն, և քան զևս սեղմել Բ. Դրան և Ազգային Պատրիարքարանի

յարաբերութեանց կապերն և աղատել Ազգին ալեկոծ նաւը փոթորկէ մ՚որմէ պէտի փչրուէր , ի չնորհս ազիտութեան , մոլեգին հակառակութեան և արտաքին չարաչաւք ազդեցութեանց , ի գործ դնելով այն ամեն օրինական և սահմանադրական միջոցներն որ համապատասխան էին Օսմանեան պետութեան շահուց և Հայ ազգին դարաւոր հաւատարմութեան զգացմանց :

Եւ Օտեան իր նպատակին հասնելու համար ոչ միայն իր տրամադրութեան ներքև ունէր ազգային մամուլն որ իր ոգւով կ՚ներշնչուէր , ժամանակին ընտրելագոյն իմաստականութիւններն՝ որոց վրայ կ՚գուրգուրար և անդուլ քաջալերէր կ՚կարդար , ազգային և պաշտօնական ազդեցութիւններն ղօրս իր քաղաքագիտական հանճարով չահիլ գիտէր , այլ և իրեն զօրավիգ էին իրաւունք , արդարութիւն և ճշմարտութիւն , որոց այնքան սիրահար էր , և որ այնքան ոյժ կ՚տային իր առաջադրած ազգային քաղաքականութեան և դատին :

Իր նշանաբանն էր ազգային անկախ եկեղեցի , որու դարաւոր ինքնօրինութեան մէջ կ՚տեսնէր ազգութեան յերկրացան հատուածներու զօրեղ կապն , ազգային բարոյական և մտաւոր յառաջդիմութեան խարիսխն և մղիչ զօրութիւնն , ինչպէս նաև երեսփոխանական վարչութիւնն , որով կ՚ուզէր ապահովել ազգային հաստատութեանց բարւոք մատակարարութիւնն : Ունենալով յետնակէտ այս նշանաբանն , տեսակէտ՝ ազգային կրթական , տնտեսական ու եկմտական պիտոյից յաջորդական լրումն , և ուղղեցոյց՝ դարուս լուսաւորութեան էական տարրերն , որոց վրայ հիմնել կ՚ջանար հայ ընկերութեան բարեշրջման պայմաններն և անոր բարոյական զգացմանց և ինքնօգնութեան դաղափարներու նոր և աշնուագոյն ուղղութիւն մը տալ , Օտեան կ՚մնար անդիմադրելի և անպարտելի և իր հզօր անհատականութեան և բարձր խոհականութեան դրոշմը կ՚տպաւորէր ամեն ազգօգուտ ձեռնարկներու , ամեն տնտեսական և վարչային խորհուրդներու և որոշումներու վրայ :

Ահա հարևանցի նկարագիրն այն մեծ մարդուն որ հայ ընկերութեան վերանորոգիչը լինելու ամեն կարևոր յատկութիւններն ունէր, և որու կատարած որոշ և ուղիղ ազգային քաղաքականութիւնն, առաջ, քանի մը դարի փոփոխութիւնները կրեց, ակնյայտնի կ'երևին ամեն անոնց որ մեր արդի առեներական և վարչային չափի, տարտամ և ազգալլուս ուղղութիւնն ի նկատի ունին։ Օտեան նի օրով՝ ազգային ղուտ քաղաքականութեան, հանրային շահուց և իրաւանց, անձնական արժանեաց և հանրօգուտ ծառայութեանց առջև պատկառ կ'գային ամեն դասակարգի Հայք, որոց խիղճը, միտքն ու սիրտն ընդհանրապէս կ'դատապարտէին անիրաւութեան, ապօրինաւորութեան և օտարամոլութեան վիժմունքն, և մամուլն Ազգին կենսական շահուցը մասին հասարակաց կարծիքը մշտրելու կ'զգուշանար, մինչդեռ բաւական ժամանակէ ի վեր ճշմարտութիւն, իրաւունք և արժանիք կ'հալածուին մինչև իսկ այն անձանց և պաշտօնական մարմինները որոց սակայն նուիրական պարտաւորութիւն պարտէր լինիլ զանոնք պաշտպանել և Ազգին արժանապատուութիւնն անվթար պահել։

Անտարակոյս պատմութիւնն աւելի պայծառ և փայլուն գոյներով պիտի հռչակէ Օտեանի մեծ հոգւոյն ներգործութիւնն ազգային կենաց վրայ, պիտի նկարագրէ զինք ոչ միայն Հայ Ազգին սիրովը վառ և աղնուագոյն խորհրդոց և ներշնչութեանց ընդունակ, այլ և իբրև մեծ քաղաքացի՝ պետութեան կենսական շահուց գիտակ և ջերմ ախոյեան, այլ և իբրև մարդ՝ որ յանձին ունէր մարդկութեան պարծանք բերող ամեն անհատական, ընտանեկան և ընկերական ընտիր ձիրք։

Այսպիսի անձնաւորութեան մը յիշատակն արժանապէս սիրած և յարգած կ'լինինք եթէ մեր այլազան պարտաւորութեանց մէջ անոր ոգւով ներշնչուինք . . . ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 25 Հոկտեմբեր 1887

Բա՛ցեկամ, Գուշակութիւնս կ'կատարուի։ Արդէն գրած էի. եթէ Լրատուին մէկ երկու ակնարկութիւններն այնքան ցունց տուին Երուսաղէմի մի քանի գործօն վեզարներու, արդեօք ի՞նչ փոթորիկ պիտի յարուցանէ սրբակրօն գանկերու մէջ իմ տանի մը խօսքս, որոց պատասխանին կ'սպասէի և ես, որպէս զի միանգամ ընդ միշտ իմ գրելիքս գրէի և ճանճեր որսացող դաս մը Հայոց աչքն ապղին արիւնովը սնանող տզրուկներու վրայ դարձընէի։

Բայց հոգ չէ. կ'անցնի այս վկվըռկը, կ'անցնին և սուրբ հոգիներու բարկութեան փրփուրներն, Միաբանութիւնն իր սրտի անդորրութիւնը կ'գտնէ, և Աղգն իր երկայնամտութիւնն, երբ կ'լսէ նորապսակ Գերապատիւ Եպիսկոպոս մը։ Կարգացի՞ր իր գրածը, չեմ հարցներ ոնր, վասն զի զրպարտութեանց խողովակն ամենուն ծանօթ է. տեսա՞ր ինչ սուրբ կրակով կ'յարճակի անձիդ դէմ. տեսա՞ր ինչ իրողութիւններ և վաստեր կ'կուտակէ, որպէս զի քեզ ափ ի բերան ընէ . . . ։ Ճշմարիտը՝ բաղդաւոր է միշտ Միաբանութիւնը, նա մանաւանդ անոր ղեկավարները։ Պարտք պարտքի վրայ կ'դիզեն, Եկեղեցական վարչութիւնը կ'հարկադրեն այդ ահագին պարտքը վճարելու անլուր եղանակ մը փնտռել, ներքին կանոնագիրք և օրէնք առաքուր կ'կոխեն, հետզհետէ ընտիր միաբաններէ չատերը կ'արտաքսեն, բաղդախնդիր սարկաւագներէ և ձեռնասուններէ կ'կողոպտուին, երբէք ելից ու մտից մէջ հաւատարակչռութիւն չեն կարող գտնել, վանքն իրրև իրենց սեպհականութիւնը նկատելով՝ ըստ հաճոյս կ'տնօրինեն ամեն ինչ, և բաւական տարիներէ ի վեր չեն արտադրեր ոչ գրական, ոչ դպրոցական և ոչ տպագրական արդիւնք, և ապա եղի պէս ջրին երեսը կ'ելլենն, անմեղ դառնուկներու պէս Հայը Աստուած և Ցիսուս կ'մայեն։ Ահա սոյն բաղդին չնորհիւն է, որ այսօր, ցարդ թադուն գանձ մը մեր առջև կ'հանեն, չնաչխարհիկ մեղրաբանութեամբ և օրհնութեամբ լի վաստաբան մը,

այս է՝ Գեր. Մամբրէ Մարկոսեան, որ իրենց թարգման կ'կանգնի է պաշտօնէ կամ անպաշտօն, չգիտեմ, այս տարբերութեամբ, այս քաջ գիտեմ, որ վանքին ներքին շատ մ'ապաշնորհ գործոց իրազեկ և բանիբուն միաբաններու դատապարտածն, ինք՝ Հ. Մամբրէ, կ'ջանայ աքօղել ու պարտիկել իր աղու և աղէկէզ լեզուաւ:

Արդէն գիտէի որ Գեր. Մամբրէ յարգելի և համակրելի եկեղեցական մ'է, ծանրախոհ և իրաւախնդիր, գիտէի որ բաւական լաւ պատկեր և լաւագոյն դիմակներ դծագրելու յաջողակ է, սակայն իր փաստաբանական հանճարին փորձը դեռ ևս չէի տեսած: Կ'վախնամ որ պատկերհանի աչքով կը կարծէ նշմարել սիրուն ու չնորհալի նկարներ ուր որ միայն խաբուսիկ կրկնանկարներ կան: Թերևս իր էջմիածնական ուղևորութիւնը նոր չնորհ ու աւիւն աղդած է հոգւոյն ու վանքին ընչաքներն, ինչպէս Քրիստոս այսահարները, հալածելու դերբնային կարողութիւն ստացած: Կ'չնորհաւորեմ իր այս նոր ձիրքն, և պարտ է չնորհապարտ լինիլ իրեն որ, ըստ պատուէրի Աւետարանին, կ'աղօթէ քու մտքի բուժութեան համար, անդամբեր սպասելով անշուշտ որ հոգւոյդ փրկութեան համար ալ հոգւոյ մը կարդալու ցանկալի ժամը չուտով հասնի: Արդ՝ մինչև որ այդ փափաքն ի կատար դայ, վասն զի կ'յուսամ թէ ամանդ քաքեպաշ անյանդ մուրատին հակառակ, քիչ մը ևս հողին վրայ և անիրաւութեան դէմ պինդ կոխելու մտադիր ես, թող ներէ ինձ Գեր. Մամբրէ հայրը խոնարհաբար յայտնելու թէ՝ բանաւոր ընդդիմաբանի մը, որ իր ձեռքն ունի անձեռնելի թղթեր և վկայութիւններ՝ Աղգին պատուոյն խնայելով՝ հարևանցի դրածներն, և եթէ ստիպուի երկարօրէն դրելիքներն, անհերքելի կերպով հաստատելու, վանդեաւոր հնութիւն կամ պարզ հայերէնով, խենդ ես ըսելն, ոչ վարդապետի վայել խօսք է և ոչ օրինաւոր փաստ, այլ գոռհիկ առարկութիւն այն կարգի անձանց որ լաւագոյնը չունին, եթէ ոչ մեղսակցութենէ, պատասխանատուութենէ պրծելու համար. թէ պարկեշտ և իրաւախնդիր միաբան մը չարաչար կ'սխալի եթէ կարծէ որ վանքին թշնամիներ կան Հայոց մէջ, որպէս թէ վանքն Աղգինը չիներ, այլ պարզապէս Միաբանութեան ապրանքն, և թէ Աղգը միայն պաշտօն ունենար դատարկութիւնը, շռայլութիւնն և զօշաքաղութիւնը սնուցանել: Ո՛չ, չկայ վանուց դէմ թշնամի: Միթէ թշնամի էր Չալճեան էֆէնտի՝ երբ

յատենի Ընդհանուր ժողովոյ՝ Միսթանութեան չինած կանոնագրի քննութեան առթիւ, կ'գոչէր թէ՝ Այդ Միսթանութիւնն կամ իր Տնօրէն ժողովը 1865ի, 1880ի ազգովին որոշուած կանոնագիրները պատռած և Ազգին երեսին նետած է՝ պարտուց ահագին անդունդի մը մէջ գլորելով զանի, և կ'խնդրէր որ ելմտական պեղծմանց դէմ 1887ի կանոնագրով որոշ և անխուսափելի ապահովութիւններ հաստատուին։ Միթէ թշնամի՞ էր Գուրգէն էֆէնտի՝ երբ նոյն նստին մէջ վանուց անկանոն մատակարարութիւնը կ'դատապարտէր, կ'հարցընէր թէ ի՞նչպէս գոյացած է այդ ահագին պարաքն, որ այլոց ալ անմեկնելի գաղտնիք կ'մնայ, և կ'պնդէր որ Թումբ մը դրուի Ազգին քսակը քամելու անպայման արտօնութեան դէմ։ Միթէ թշնամի՞ էր Ա. ղարեգեանց էֆէնտի՝ երբ խնդրոյն աւելի խորը թափանցելով՝ կանոնագիրն իրաւամբ առևտրական թուղթ մը, վարձատուի և վարձակալի մէջ կերպ մը պայմանագիր կ'նկատէր, վարձակալին քմահին չռայլութիւններն ազգովին տուժելու թէութեամբ, և զուրկ այն հիմնական կարևոր տրամադրութիւններէ որով Սերուսաղէմի երբեմն չքեղ վանքը պարտէր պահել իր առաքելական, ազգային ու բարոյական բարձր նշանակութիւնն ու դրոշմն, և չէ թէ միաբան վարդապետաց վաճառատուն դառնալ։

Թերևս, բարեկամ, քեզ յիմար և թշնամի կոչողն, այդ երեսփոխաններն ալ վանքին թշնամի հռչակէ, բայց իմ կարծեօք վանքին բուն թշնամին այն է՝ որ խել մը միաբանից անկարգութեանց վրայ աչք կ'գոցէ կամ իրրև բնական բաներ կը ներկայէ, այն է թշնամին՝ որ քառ հեծանիւին վիրաց դեղ ու դարմանն փնտռողները կ'թշնամանէ, չէ թէ պատահական այլ ճայոյս ազգալիաս անկանոնութիւններ պարտըկելու համար հրապարակ կ'ելնէ և մինչև իսկ Ազգէն մարտիրոսութեան պսակ կ'խնդրէ այնպիսի դլուխներու համար որ պատժոյ արժանի են. թշնամին այն է՝ որ բարոյապէս ու նիւթապէս կործանման ճամբուն մէջ ընկած նշանաւոր հաստատութիւն մը դէպ ի անդունդ գլորելու փորձեր կ'ընէ . . . ։

Բայց ո՞ գիտէ, թերևս իրաւունք ունի Հայր Մամբրէ և կը սխալի Շահնուրդ, եթէ ի նկատի առնուի որ ժամանակէ մ'ի վեր ինչպէս կ'գնհատուին մեր մէջ առ հասարակ ճշմարտասաութիւն, ազգային ծառայութիւն, արժանիք, անկեղծութիւն, ուղղամտութիւն և արդարութիւն, ինչպէս բարձրա-

գլուխ կ'փառաւորուին ստուերները, դրպարտութիւնն և խոր-
բամանկութիւնը: Այս տեսակէտով արդարև չնչաք և հեռանք է
այն Հայն՝ որ դեռ իրաւունք և ճշմարտութիւն կ'պաշտպանէ,
ազուշ է այն՝ որ Ազգին ներկեցուցչ անկախութիւնն և հայ-
րապետական ինքնօրինութեան համար կ'խօսի, կ'գրէ և Հայոց
ամենէ նուիրական զգացմանց կոչնակ կ'ընէ, այսահար է այն՝
ի մի բան, որ անկեղծօրէն կ'սիրէ Ազգն և անոր պատուոյն,
կենսական իրաւանց և վերաչինութեան նախանձախնդիր կը
կ'կանգնի, անատուած է այն՝ որ Ազգն իր ներքին և օտար
թշնամիներէ կ'զգուշացընէ և իր էութեան ամենէ կենսական
տարրերն անվնաս պահելու յորդոր կ'կարդայ:

Ուստի Թող Գեր. Մամբրէ չարունակէ իր աղօթքն այսպիսի
մեղապարտներու համար, որոցմէ մին լինելու պատիւն ունիմ.
. . .

ՇԱՀՆՈՒՐ

ՀԱՆՐԱԳԻՐ ՄԸ

Ներկայ օգոստոս ամսոյն սկիզբները ձայն ելաւ քաղաքիս
մէջ թէ՝ Մեծ. Եսայեանց նախանձեռնութեամբ հանրագիր մը
կ'տորագրուի, թէ այդ հանրագրին առարկան վիճակիս Ամե-
նապատիւ Առաջնորդ՝ Մելքիսեդեկ Մուրատեանց Սրբազանն
է, և թէ չարժառիթն է Մեծ. Եսայեանց դժգոհութիւնն
ընդդէմ Նորին Սրբազնութեան, որ իր տկարութիւնն տեսա-
կելով՝ չէր գտնուած ներկայ յուզարկաւորութեան թափորին
բարեյիշատակ Սահակեան աղայի Եսայեան: Ի սկզբան անհաս-
տատելի թուեցաւ մեզի այդ ձայնն, սակայն վերջէն տեսրագրու-
թիւն հաւաքելու համար երեսան ելած չարժումն, ինչպէս չա-
տերուն, նոյնպէս մեր հետաքրքրութիւնը դրդուեց իմանալու
այդ հանրագրին ձևն ու հիմն, թէև անյոյս էինք մեր այս հե-
տաքրքրութիւնն իսկոյն գոհ ընել, նկատելով որ հանրագրին
նպատակն ձեռնհաս իշխանութեան տալիք որոշումէն եաքն
թերևս երևան գար:

Բայց մեծ եղաւ մեր զարմանքն երբ Ապրիլի 28 օգոստոս

թուական թերթին մէջ տեսանք անոր պատճէնն, և աւելի մեծ՝ երբ զայն կարդացինք։ Զգտանք հանրագրին ծնունդ տուող համբաւեալ պատճառն, այլ միայն Ս. Առաջնորդին, ժողովոց և խորհրդոց դէմ ամբաստանութեանց խառն ու չփոթ կայտ մ'որու մեծագոյն մասն արդէն ծանօթ թերթերու մէջ, անժխտելի հերքումներու հակառակ, տակաւ կրկնուած են և կ'կրկնուին դէմ հաւանականութեան գոյն մը տալու յամառութեամբ, և որ, սակայն, այս անգամ հանրագրին մէջ այնպիսի անհատականութեանց մատնոտու դրոշմով և ոճով դրուած կ'ներկայանան, որ չատ հեռի են ծանրակշիռ և լուրջ ամբաստանագիր մը կազմելու հանդամանքէն և պատշաճութեան տարրական կանոններէ։

Սահմանադրութեան ճրդ յօդուածի տրամադրութեան համեմատ, ինչպէս Պատրիարք մը, նոյնպէս Առաջնորդ մը կրնայ ամբաստանութեան ենթարկիլ ինչ Ընդհանուր, Կրօնական և Քաղաքական ժողովոց կողմէ։ Սակայն ընդունելով որ ժողովուրդն ալ իրաւունք ունի բողոքելու, դէմ այդ իրաւունքն օրինական և պատշաճաւոր ձեւակերպութեամբ կատարելն կարեւոր է։ Տանեմէկ տարիէ ի վեր ժողովրդեան կողմէ միմակիս Առաջնորդին դէմ ոչ Գաւառական, ոչ Կրօնական և ոչ Քաղաքական ժողովոց ուղղեալ բողոքագիր մը տեսնուած չէ, մինչդեռ չնորհակալութեան ու վստահութեան ուղերձներ ուղղուած կան։ Ուստի եթէ այդպիսի բողոքագիր մը ներկայանար, անշուշտ նկատողութեան պիտի առնուէր և պարտ ու պատշաճը պիտի տնօրինուէր։

Բայց հանրագիրն ուրանալով միմակիս սահմանադրական կազմուած և կանգնուն Գաւառական, Կրօնական և Քաղաքական ժողովոց գոյութիւնն, կ'դիմէ ուղղակի Կեդրոնական վարչութեան և կ'խնդրէ որ անվիջապէս իշխանարար պաշտօնանկ ընէ Ս. Առաջնորդն։ Ներում ունել յայտնել որ յանուն Սահմանադրութեան չարժողն նոյն Սահմանադրութեան ամեն պահանջումներն յարգելու կ'պարտաւորի, և անտարակոյս այս պարագային մէջ եթէ կայ իշխանութիւն մը որ ամենէ աւելի օրինապահութեան օրինակ պիտի հանդիսանայ և առանց նախնական քննութեան չպիտի վարուի, այս իշխանութիւնն է Կեդրոնական վարչութիւնն։

Նախնական քննութիւն մը նախ երեւան պիտի հանէ ստորագրութեանց բնութիւնն, ապա եթէ այդ ստորագրութիւն-

ներն Սահմանադրութեան պահանջած ամեն հանգամանքն ու-նին, ամբաստանութեանց կէտերուն արժէքն:

Աբեղէ կ'գրէ թէ հանրագիրն ունի 300 ստորագրութիւն, թող ինչ-ու իսկ 100 լինի, միտքի չէ, դարձեալ իր կշիռը չկորուսեր և անշուշտ նկատողութեան կ'առնուի: Միայն ուրիշ նըկատելու մի կարևոր կէտն այս է, որ եթէ հանրագիրն չէ թէ 3 հարիւր, այլ 3000 ստորագրութիւն անդամ ունենար չպիտի կարենար հակառակել Էջմիածնի համազգային ժողովին միահամուռ քուէն, որ մի քանի միլիոն Հայոց ձայնն էր, և որով վիճակիս Ս. Աթոռն կաթոլիկոսական Աթոռը բազմելու կ'կոչուէր: Այս համազգային քուէն ոչ միայն Ընտրելոյն, այլ և Ջմիւռնիոյ Հայոց պատուոյ և պարծանաց առիթ մ'էր, քանի որ իրենց առաջնորդական իմաստուն ընտրութիւնը կ'փառաւորէր, Ամեն. Մուրատեանց Սրբազանն Ս. Լուսաւորչի Աթոռին արժանի հռչակելով:

Եւ ինչ է այս համազգային վստահութեան չարժառիթն, եթէ ոչ Ամեն. Մուրատեանց Սրբազանին բարոյական և մտաւորական բարձր արժանիքը, հայրենասիրական հանրածանօթ հոգին, կրօնական խորին հմտութիւնն, քարոզչական հազուագիւտ տաղանդն ու հոգեշունչ պերճախօսութիւնն, եկեղեցասէր և ժողովրդասէր անկեղծ, ուղիղ և անշահախնդիր բնաւորութիւնն և այս ամեն հանգամանօք Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգին մէջ միշտ պահած անբասիր և պատկառելի դիրքը:

Ահա այս հոգւով վարուած է թէ ի Կովկաս, ուր ժողովրդին կ'պաշտպանէ, թէ ի Կ. Պոլիս, թէ յերուսաղէմ և թէ իր պատնազան ուսուցչական, գրագիտական, երեսփոխանական, վարդապետական պաշտամանց մէջ և թէ իր նուիրակութեան մէջ ի Ռումանիա, ի Լեհաստան և այլուր, բնաւ երբէք դանգատատանց տեղի չտալով, այլ ամեն ուրէք իր հանրօգուտ ծառայութեանց զգալի նշանները թողլով և վայելելով հետևապէս հայման ժողովրդեան յարգն, համարումն ու սէրը:

Այսպէս վարուած է նաև իր առաջնորդական և հովուական պաշտօնին և պարտաւորութեանց մէջ՝ տասն մէկ տարիներէ ի վեր: Շատ երկար պիտի լինէր մի առ մի նշանակել այդ չրջանի մէջ իր խորհրդով, իր նախաձեռնութեամբ, իր ազդասիրական եռանդով կատարուած ապրօգուտ գործերն վիճակիս մէջ. այն խաղաղասիրական, կրթական և տնտեսական տնօրէնութիւններն զոր երբեմն անձամբ այցելելով և երբեմն վստահելի վար-

դապետի ձեռօք ըրած է թեմերուն մէջ։ Աւելորդ է մի առ մի յիշատակել ու թուել Ս. Աթոռոյս տեղական կառավարութեան առջև վայելած համարման շնորհիւ Ազգին համար ծագած օգուտներն, ժողովրդեան զարգացման համար կատարուած գործերն ու կարգադրութիւնները, կանգնուած հաստատութիւններն, ընկերութիւնները և հանրային կարևորութիւն ունեցող ղանազան ձեռնարկները իր աչալրջութեան, օրինասիրութեան ու գործունէութեան շնորհիւ և աջակցութեամբ սահմանադրապէս կազմուած ժողովներու, խորհուրդներու, և յանձնաժողովներու, առատաձեռնութեամբ մեծանուն բարերարներու և ժողովրդեան առատասիրտ օժանդակութեամբ, քանի որ Տեղական Կառավարութեան և Ազգային Առաջնորդարանի մէջ սիրած բարեկամական յարաբերութիւնները, քանի որ պաշտօնական արձանագրութիւնները, համաբաժանութիւնները տպել և անտիպ տեղեկագիրները, որ Ս Աթոռոյս հրատարակութիւն չունէին, վերաշինել ազգային հիւանդանոցն, Հռիփսիմեան և Մեսրոպեան ազգային վարժարանները, Ս. Սահակեանոց նիստերուն սենեակն և արտաքին մարմարաչէն բակերն, հայոց նոր, դեղագիտական Վերնատունն և անդ հինուած մատուռն ու նոր ի նորոյ կառուցուած կալուածներն, կանգուն և մշտաբարբառ վկաներ են Ամեն. Մուրատեանց Սրբազանին արդիւնաւէտ և ազգաշէն առաջնորդութեան։ Ի՞նչ հարկ յիշատակել նաև այլ և այլ նշանաւոր և բարեպաշտ ազգայնոց կողմէ յանուն Ս. Աթոռոյս հատած զանազան նուէրներն ի նպաստ ազգատոհմ, որոց կանոնաւորապէս բաշխուած են, նաև եղած կտակներն Ազգին, ինչպէս և կրթական, անտեսական ու եկեղեցական մատակարարութեան մէջ իր և ժողովոյ այրեաց հսկողութեամբ ներմուծուած բարւոքումներն և կանոնաւորութիւնն, այնպէս որ ժողովրդային կրթութիւնն աւելի ևս ծաւալած, դպրոցական թոշակաց ինչպէս նաև ազգային արուց բաշխումն, ըստ արդարութեան, ամեն վաստակի տէր ազգայնոց կարողութեան համեմատ անօրինուած և վճարումն դիւրացած է, ազգային կալուածոց եկամուտներն ապահովուած, ազգային հատատութեանց ծախքն, տարուէ տարի Գաւառական ժողովներու որոշած ելեմտոյցներուն համեմատ, 11 տարիէ ի վեր անընդհատ կանոնաւորութեամբ վճարուած են և կ'վճարուին, ազգային արկղին վարկն այնքան բարձրացած է, որ երբեմն պարտուց համար % 12 տոկոսն ցի և ապա 6ի իջած է, ինչպէս և

ցարդ , իրողութիւն՝ որ անհերքելի ապացոյց և անվրիպելի փորձաքար մ'է տեղւոյս վարչային տասնամեայ գործառնութեանց նախանձելի վիճակին , ծաղոմոց և խորհրդոց գործունէութեան ու խղճամիտ ահ հանազրասիրութեան , և ազգային ամեն պաշտօնէից պարտաճանաչութեան և անձնուիրութեան :

Ահա լոկ ուրուագիր մը Զմիւռնիոյ ազգային գործոց վիճակին , որոց վրայ կարելի է թերթեր ընել և որոց մի մասն իսկ ուրիշ գաւառական ոևէ ժողովրդեան պարծանաց տիտղոսը պիտի կազմէր , այլ սակայն Զմիւռնիոյ ազգայնոց բնական կ'երևին , վասն զի երկար տարիներէ ի վեր խաղաղութեան , բարեկարգութեան և յառաջդիմութեան պատուղներ վայելելու վարժած են՝ ընդ հայրախնամ հովանաւորութեամբ վիճակիս Ամեն. Առաջնորդին :

ԱՐԵՒԵԼՔԻ ԱՌԱՄՊԵԼԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Նոր ճշմարտութիւն մ'ըսած չենք լինիր յայտնելով որ Արևելք սովորութիւն ունի ազգային ճշմարիտ իրողութիւնները սակս ծանծաղել և այնպիսի առասպելներ յերիւրել որ իր հետևած հակազգային ուղղութեան համապատասխան լինին : Իսկ երբ խնդիրն Զմիւռնիոյ ազգայնոց յառաջդիմական ձեռնարկներու և մանաւանդ անոնց Սրբազան Առաջնորդին վրայ կ'դառնայ , Արևելքի զայրոյթը չափ չգիտեր և բերնին եկածը դուրս կ'թափէ : Շօշափելի նոր օրինակ մ'է Արևելքի այդ թշնամութենէ տրամադրութեան Իզմիրի Առաջնորդին ապրած վերնագրով յօդուածն , անհեղեղ յօդուած՝ զոր ինքզինք յարգող թերթ մը չնուաստանար գրելու և ազգային արժանապատուութեան պարզ զգացմունք մը տածող Հայ մ'անգամ չկրնար առանց զզուանքի կարգալու :

Թերթ մ'որու խմբագրութիւնն անանուն է , և հետևապէս արտայայտած կարծեաց քաջութիւնն ու պատասխանատուութիւնը չունի , թերևս իրեն ներելի համարի անպատկառ յարձակիլ պատկառելի անձնաւորութեան մը դէմ ; վասն զի՝ մեզի

անկարելի կ'թուի երևակայել որ Ակնելքի Վարչական մարմնոյն պատուաւոր անդամներէն մին իր ատորագրութեամբն վաւերէ՝ ի մէջ այլոց, և այն յօդուածն որ չորաչար կ'մեղանչէ սահմանադրական ազնիւ ճշմարտութեան դէմ, այլ և այլ տարբեր խնդիրներ դիտմամբ իրարու հետ կ'խառնէ, և ի վերջ՝ պատուարի պաշտօն ըստանձնելով՝ Իզմիրի Ս. Ադաջնորդն մեզ պարտ կ'հրատարակէ, դատապարտութեան վճիռը կ'արձակէ, և կ'անպատուէ այնպիսի Եկեղեցական մ'որ կաթոլիկոսական պաշտօնին արժանի հանդիսացած է աղդովին, անպատուելով նաև Համազդային ժողովոյ քուէն և Հայ Եկեղեցականութիւնը։

Ձմարիտը՝ ձանձրոյթ կ'պատճառ քանիցս հերքուած առասպելներ վերստին ջրել։ Շատեր դիտեն արդէն որ Շահպազեան վարդապետի խնդիրն բնաւ վերաբերութիւն չունի Մանիասի ժողովրդեան և երկու քահանայից վ'ձին հետ։ Մին յօդուածի մը կ'պատկանի, միւսն ժողովրդային դժդոհութեան ընդդէմ երկու խաւասլոյզ կրօնաւորաց։ Առաջին խնդրոյն նկատմամբ Ս. Ադաջնորդն քանիցս ի պաշտօնէ յայտարարեց Ազդային Պատրիարքարանի որ ձեռնպահ կ'ուզէ մնալ և թէ նա ազատ է ինքնին կոչել ի քննութիւն յիշեալ վարդապետն, եթէ անհրաժեշտ կ'դատի։ Գրեթէ տարի մը կ'անցնի. Ազդային Պատրիարքարանը չկոչեր Շահպազեան վարդապետն և ձայն չհաներ։ Երբ այնուհետև երկրորդ խնդիրը կ'ծագի, իբրև իր ադաջնորդական իրաւասութեան պատկանող դործ՝ Ս. Ադաջնորդն կ'սկսաւ, վասն զի կարծէ թէ Մանիասի խռովութեան իբրև հեղինակ, թէև անմեղ, Շահպազեան վարդապետը կ'նկատուի և այս պատճառաւ վերստին կ'կոչուի Ազդային Պատրիարքարանի կողմէ, մինչդեռ բուն յանցաւորներն կ'մին քահանաները։ Ուստի Ս. Ադաջնորդն Ազդային Պատրիարքարանի կ'հարցընէ թէ ինչո՞ւ կ'կոչուի Շահպազեան վարդապետն։ Երբ հուսկ ուրեմն Ազդային Պատրիարքարանը կ'հաստի յայտնել թէ յօդուածին համար կ'կոչուի, Ս. Ադաջնորդն իր նախորդ պատասխանը կ'կրկնէ, այս է թէ՝ հեռի կ'ուզէ մնալ այդ խնդրէն։

Արդ՝ այս արժանավայել ընթացքին մէջ կայ Երէցմոռին, ըմբռնողութիւն, կայ Ղազարոսին, գրքոյրն Ս. Ադաջնորդի կողմէ, ինչպէս կ'կարծէ Ակնելք։ Բայց աւաղ՝ այդ թերթն այնպէս կ'ներկայէ Մանիասի խռովութիւնն, որպէս թէ անոր հեղինակներն են Շահպազեան և Ս. Ադաջնորդն, հակառակ

պաշտօնական գրութեանց : Տէրն է ըսել. «Ահա այսպէս կը դրուի Աբէլեմի վրայ պաֆմաՐիՒՆԸ :» Յաւելին այս է որ Ազգային Պատրիարքարանը միայն Տէր Յովհաննէս քահանայի խօսքին հաւատս ընծայելով՝ այնպէս կ'անօրինէ բաներն որ Մանկասեի ժողովրդեան ձայնն անլսելի կ'մնայ , Ս. Առաքելոյն մատուցած տեղեկագիրն առ ոչինչ կ'դրուի , Տէր Յովհաննէս քահանայն իր անկանոն ընթացից մէջ կ'քաջալերուի և Աբէլէ իր համախոհներուն հետ թևեր կ'առնու :

Ազգային Պատրիարքարան կրնար հարցընել Տէր Յովհաննէս քահանային թէ՝ իր 30–35 տարուան քահանայապետութեան չրջանին մէջ ի Մանիսա (Շահպաղլեան վարդապետեան դեռ երկու տարի է որ հոն կ'գտնուի) անցուցած է Ծննդեան և Զատկի օրեր որ ժողովրդեան հետ գժտած և մեծ խռովութիւններ հանած չլինի . կրնար ուղղակի դրել Մանիսայի Թաղական Խորհրդին և ժողովրդեան և այս մասին ստոյգ տեղեկութիւններ խնդրել : Այս բաւական չէ , Ս. Առաքելոյն կոչմէ քահանայապետութենէ արդիւնած քահանային է ՓՆՏՐՈՒՆ արտօնութիւն կ'տրուի մայրաքաղաքի մէջ պատարագ ընել՝ եկեղեցական հաստատեալ կանոնաց հակառակ : Ուրեմն ո՛և է եպիսկոպոսի արդիլեալն , Կրօնական ժողովին լուծածն ու բանադրածն ուրիշ եպիսկոպոս մը և կրօնական հեղինակութիւն մը , Երուսաղէմի , Սիսի , Ալթամարի , արձակելու ու կապելու իրաւունք պիտի ունենայ այսուհետև , թէև մեր գիտցածն այս է թէ՝ Կաթողիկոսն անդամ չէ կարող եպիսկոպոսի մը պատժած եկեղեցականն ինքնուրոյն արձակել , թող թէ վերյարել , և նշանաւոր օրինակ է մեզ Կալկաթայի խաչիկեան Աւագ քահանայն , որ այսքան տարիներէ ի վեր՝ առ Կաթողիկոս եղած թախանձանաց հակառակ , չէ կրցած իր քահանայական պաշտօնը վարել Պարսկաստանի Առաքելոյն հիմնաւոր կամ անհիմն յանցանքի մը վրայ արձակած արգիլման պատճառաւ :

Թերևս կեդրոնական վարչութեան Պատկառելի Կրօնական ժողովը նոր կանոն և օրէնք հաստատած է այս մասին որ մեզի անծանօթ է : Բայց մեզի չատ որոշ երևցածն այս է , որ ճշմարտութիւնն ու արդարութիւնն անգոսնող և հաստատեալ օրինաց դէմ գործող ո և է իշխանութիւն անիշխանութեան օրինակ տալով չէ կարող կանգուն մնալ , և ոչ այն ժողովուրդն որ առաստելներու կ'հաւատայ և անիրաւութեան այժ կ'տայ :

ԱՑԼԵԻ ԱՑԼԻՔ

Արտադրութիւն տաբկի. Հաշիւ եղած է որ բոլոր աշխարհի մէջ տաբկի արտադրութիւնը կ'հասնի 600,000 դ.ոյէն մինչեւ 650,000 դ.ոյս։ Ա.յս գումարէն միայն Պրազիլ ունի շուրջ 340-380,000 և Ճաւա՝ 60,000-էն մինչ 90,000 դ.ոյս, Բրիտանական գաղթականութեանց արտադրածն է գրեթէ 35,00 դ.ոյս, որմէ Հնդկաստանի մասն է 15-18,000 դ.ոյս, Ցէյլանինը 10-12,000 դ.ոյս և Ճամաիքա 4-5,000 դ.ոյս։ Թէև Բրիտանական գաղթականութեանց արտադրած տաբկը համեմատաբար քիչ է, բայց առաջին տեղը կ'բռնէ իր գերազանցութեան համար։

Քօլերայի վիճակը յետքայլ. Մայիսի մէջ քօլերան դեռ կ'ճարահի՝ թէև հետզհետէ տկարանալու վրայ է։ Ամսոյս վերջին օրերն 38 հոգի բռնուելով՝ 26 հոգի մեռան։ Մինչև օդոստոսի սկիզբն մեռելոց թիւը կը հասնի 121ի։ Սիկիլիոյ մէջ հիւանդութիւնն աւելի կատարած կ'ընէ ի Գադանիա, Բալերմօ և Մեսսինա։ Իտալիոյ կէդրոնն և յատկապէս ի Նափոլի անպակաս են քօլերայի զոհերն, ինչպէս նաև ի Քաբօ Քօլոնէ։

Բնական կազ դանուեցաւ. Մինեղօդայի հարաւային կողմն, և անքաւ ջրոյն հոսանք յառաջ եկաւ նոր փորուած երեք հատ հորերէ։ Նոր ընկերութիւն մը կազմուած է, որպէս զի 10,000 արտաւար հողի վրայ հորեր բանալով, ելեկտրիք կազն տրդիւնաւորէ։

Բամբակի քերթն Ամերիկայի հարաւային կողմն այս տարի քան ամեն ժամանակ առատ պիտի լինի, այս է՝ 7,500,000 հակ։ Անցեալ տարի 7,-000,000 հակ էր, իսկ 1885ին 6,500,000։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆԴ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ։ — Գրեց Պ. Յովհաննէս Յակոբեանեան։ Մոսկուա, 1887։ Գին 75 կոպ.

Ա. ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՄԵՐ։ — Հայ վարժիչք և վարժարանք ի Կոստանդնուպոլիս։ Գրեց Պ. Յ. Ոսկեան (ի նպաստ Ս. Փ. ազգային հիւանդանոցի)։ Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Գ. Պաղտասարեան։ Գին 5 դահեկան։

ՍԱԼԻՍՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ։ — Նկարագիր ուխտաւոր ուղևորութեան։ Թիֆլիս, տպագրութիւն Մ. Ռօսինեան, 1887։ Գին 50 կոպ.

Քաղաքական մասն, տեղւոյն անձկութեան պատճառաւ յաջորդ թերթով պիտի հրատարակուի։

Խմբագիր-Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ